




Գիտություն

ՓԵՏՐՎԱՐ
№ 2
(219)
2010 թ.

ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի թերթ • Հրատարակվում է 1993 թ. փետրվարից



«Գիտության աշխարհում» - 5

ՀՀ ԳԱԱ նիստերի դահլիճում կայացավ հանդիսություն, որը նվիրված էր ԳԱԱ «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսի հրատարակման 5-ամյակին:

Հանդիսությունը բացեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը: Կարևորելով հանդեսի նշանակությունը հանրամատչելի գիտության տարածման և պրոպագանդան գործում, ՀՀ ԳԱԱ նախագահը մասնավորապես ընդգծեց հանդեսի դերը մեր օրերում, երբ մեր հանրապետությունը նշանաբան է ընտրել գիտատար տնտեսության, գիտելիքի երկիր կառուցելու կարգախոսը: ԳԱԱ նախագահը շնորհավորեց «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսի խմբագրակազմին և հրատարակիչներին, հանդեսին մաղթեց նորանոր հոբելյաններ և ստեղծագործական հաջողություններ:

Այնուհետև ելույթ ունեցավ հանդեսի գլխավոր խմբագիր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Էդուարդ Ղազարյանը և ներկայացրեց հանդեսի ստեղծման պատմությունը, նրա առջև դրված խնդիրները և այն անելիքները, որոնք ծրագրել է խմբագրակազմը:

Իր տեսակի մեջ Հայաստանի միակ հանդեսի հնգամյակը շնորհավորեցին և ողջունի ուղերձներ հանձնեցին ՀՀ Սփյուռքի նախարար Հրանուշ Հակոբյանը, ՀՀ ԲՈՂ-ի նախագահ, պրոֆեսոր Արմեն Թոշունյանը, ՀՀ ԳԱԱ Արվեստի ինստիտուտի տնօրեն Արարատ Աղասյանը, Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռ. Հակոբյանը, Հայ-ռուսական (սլավոնական) համալսարանի գիտական գծով պրոռեկտոր Պարգև Ավետիսյանը, Գյումրիի պետական մանկավարժական ինստիտուտի ռեկտոր Վ. Գրիգորյանը, Երևանի պետական համալսարանի Արտաշես Շահինյանի անվան ֆիզմաթ. դպրոցի տնօրեն Հ. Նավասարդյանը:

Հանդիսությունը հակիրճ խոսքով ամփոփեց ՀՀ ԳԱԱ նախագահ Ռադիկ Մարտիրոսյանը և ՀՀ Գիտությունների ազգային ակադեմիայի վաստակագրեր և պատվոգրեր հանձնեց հանդեսի հրատարակման գործում աչքի ընկած մի խումբ նվիրյալների:

- Պարգևատրվածների թվում են՝
- ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆԸ (հետմահու)՝ «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսի հիմնադրմանը մատուցած անգնահատելի ծառայությունների համար,
 - ՀԱՅԿ ՂԱԶԱՐՅԱՆԸ՝ որպես «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսի ամենաակտիվ ընթերցող և գովազդող,
 - ՇԱՀԵՆ ԽԱՀԱՏՐՅԱՆԸ՝ որպես «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսի ամենակտիվ հեղինակ,
 - «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսի գործադիր տնօրեն ԱԼԲԵՐՏ ՄԱՐԳԱՅԱՆԸ՝ Հանդեսի 5-ամյակի կապակցությամբ:
 - «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսի պատասխանատու քարտուղար ՆԱՐԻՆԵ ՎԱՐԴԱՆՅԱՆԸ՝ Հանդեսի 5-ամյակի կապակցությամբ:
 - ԱԼՎԱՐԴ ՕՀԱՆՏԱՆՅԱՆԸ՝ «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսի գեղարվեստական ձևավորման համար:
 - ԶՐԻՍՏԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆԸ՝ «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսի սրբագրական աշխատանքների համար:

Սրտանց շնորհավորում են «Գիտության աշխարհում» գիտահանրամատչելի հանդեսի խմբագրակազմին՝ հանդեսի հիմնադրման 5-ամյակի կապակցությամբ:

Հինգ տարի առաջ ՀՀ ԳԱԱ հովանու ներքո հիմնադրվեց ակադեմիայի պատմության մեջ առաջին և միակ գիտահանրամատչելի հանդեսը: Ժամանակը ցույց տվեց, որ նրա գոյությունը, իրոք, անհրաժեշտ էր և պետքական: Ակադեմիայում լույս են տեսնում գիտական տարբեր ուղղություններով տարբեր ամսագրեր, սակայն բոլոր բնագավառները մեկտեղող, գիտահանրամատչելի միակ հանդեսը «Գիտության աշխարհում»-ն է: Այս հինգ տարիների ընթացքում նրա գործունեությունը ու ընթերցողների ջերմ ու դրական արձագանքներն ապացուցում են, որ հանդեսն իր առջև դրած նպատակները լավագույնս իրականացնում է: «Գիտության աշխարհում»-ի էջերում հանդես են գալիս հանրապետության լավագույն գիտնականներից շատերը, հոդվածները գիտության արդի հիմնախնդիրներին նվիրված հետաքրքրաշարժ նյութեր են, դիզայնը և ձևավորումը՝ ժամանակակից և գրավիչ: Այն իր բարձր որակով և առանձնանում է մեր հանրապետությունում լույս տեսնող գիտական հանդեսներից: Հանդեսն այսօր ունի բաժանորդների և ընթերցողների կայուն բանակ, հեղինակների մշտական բանկ:

Այսօր դուք տոնում եք հանդեսի 5-ամյակը: Մաղթում են Ձեզ երկար տարիների բեղմնավոր ստեղծագործական աշխատանք և նորանոր ձեռքբերումներ:

Ռադիկ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ
ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս

ՄԵԿՆԱՐԿԵՑ ՏԵՐՅԱՆԱԿԱՆ ՏԱՐԻՆ



Մի՛ խառնեք մեզ ձեր վայրի, արջի ցեղերին,-
Մեր երկիրը ավերված, բայց սուրբ է և հին:

Որպես լեռն է մեր պայծառ փեսեյ հազար ձյուն,
Այնպես նոր չեն մեզ համար դավ ու դառնություն:

Բարեկուն է եղել մեր ախոյանը՝ փես-
Անհետ կորել, անցել է - չար մշուշի պես:

Ասորիքն է եղել մեր թշնամին- ահա՛
Դաշը է փռվել և չքա քար քարի վրա:

Ամրակուռ է մեր հոգին- դարերի՝ զավակ՝
Շար է փռվել մեր սիրտը ավեր ու կրակ:

Շար է փռվել երկիրն իմ ցավ ու արհավիրք,
Լաց է այնպեղ ամեն երգ և ողբ ամեն գիրք:

Գերված ենք մենք, ո՛չ սպրուկ - գերված մի արծիվ,
Չարության դեմ վեհաբար միշտ, վաղի դեմ ազնիվ:

Բարբարոսներ շար կրգան ու կանցնեն անհետ,
Արքայական խոսքը մեր կըմնա հավեր:

Չի հասկանա ձեր հոգին և ծուլ, և օտար,
Տաճար է մեր երկիրը՝ սուրբ է ամեն քար:

Եզիպական բուրգերը փռչի կողառնան,
Արևի պես, երկիր իմ, կվառվես վառման:

Որպես Փյունիկ կրակից կելենա, կելենա նոր
Գեղեցկությամբ ու փառքով վառ ու լուսավոր:

Արիացի՛ր, սիր՛ք իմ, ե՛լ հավաքով փոկուն,
Կանգնի՛ր հպարտ որպես լույս լեռն է մեր կանգուն:

Այսպեղ է լացել իմ մայրը
Մորմոքն իր և իր օրորը,
Այսպեղ այնպես անձայր է
Թախիծը և այնպես խոր է:

Մեր փունը համր ու դափարկ է,
Մեր փունը որք ու ավեր է,
Բարակ զանգակի զարկը
Լալիս է երկրիս ցավերը...

Արմեն Սաղաթեյանը վերընտրվեց

ՀՀ ԳԱԱ Էկոլոգոնոսֆերային հետազոտությունների կենտրոնի տնօրենի պաշտոնում միաձայն վերընտրվեց կենտրոնի տնօրեն Ե.հ.գ.դ. Արմեն Սաղաթեյանը: Տնօրենի ընտրությունը տեղի ունեցավ փետրվարի 10-ին ՀՀ ԳԱԱ նախագահության նիստում:

ՀՀ ԳԱԱ Տեղեկատվական-վերլուծական կենտրոն

ՏԱՐԻՆ ԶԵՉԵԼՈՒ Է ՏԵՐՅԱՆՈՎ

Փետրվարի 9-ը Վահան Տերյանի ծննդյան օրն է, ինչի կապակցությամբ տերյանյան հասարակությունը հավաքվել էր Կոմիտասի անվան զբոսայգու պանթեոնում, որտեղ ամփոփված է բանաստեղծի աճյունը: Հայոց Մեծերի պանթեոնում կազմակերպվել էր Վահան Տերյանին նվիրված միջոցառում, որին ներկա էին նաև ՀՀ վարչապետ Տիգրան Սարգսյանը, մշակույթի նախարար Հասմիկ Պողոսյանը, Ամ պատգամավորներ, պաշտոնական շատ անձիք, ինչպես նաև գրողներ, մանկավարժներ, աշակերտներ, ովքեր եկել էին բանաստեղծի հանդեպ ունեցած իրենց նվիրումն ու սերն արտահայտելու:

Այս միջոցառումը հայ պոետի հանդեպ ունեցած ջերմության, սիրտ և ակնածանքի արտահայտություն է, Տերյանի հիշատակի խնկարկումի մի հրաշալի օրինակ:

Ամեն ինչի մեջ խորհուրդ դնողի մաքուր սովորությամբ մենք Մեծերի պանթեոնում մի կտոր մասունք ենք ամփոփել ու շիրմաքար դրել: Բոլորս էլ գիտենք, որ Տերյանի շիրմն այստեղ չէ՝ հեռավոր Օրենբուրգում է, գիտենք, բայց Տերյանին մեր կողքին պահելու բերկրանքն ունենալու համոթյամբ ուխտատեղի ենք դարձրել նրա անվամբ այս փոքրիկ անկյունը՝ իր գրչակից ընկերների կողքին:



Նա, ինչ է, հայրենիքից շատ հեռու կանխագործ էր եկող իր ողբերգական մահը: Այդ ի՞նչ զգացողություն, ինչ կանխագագում էր, որ նա պիտի գրեր. «Իմ գերեզմանը թող լինի հեռվում, /Ուր մահացել են շուկ, երգ ու ծայր, /Թող շուրջս փռվի անանգ լուրջություն, /Թող ինձ չընկիչեն, թող ինձ մոռանան»: Նա սխալվեց միայն իրեն մոռանալու առումով, մնացածը, ավար, մարգարեական ճշտությամբ կատարվեց: Ավետիք Իսահակյանը պիտի կսկիծով վկայեր. «Մրկաշունչ ստեղծներում, հայրենի օջախից շատ հեռու, դառնագին հիվանդության ճիրաններում դադարեց բաբախել մի խորունկ սիրտ, դադարեց գործել մի մեծ ինտելեկտ, որ ծնված էր զգալու և խորհելու, ստեղծագործելու և իմաստավորելու մարդկային գոյությունը»:

Տերյանը, այո, իմաստավորեց իր կյանքը, նաև մեզ սովորեցրեց մաքուր ապրումներով իմաստավորել մեր աշխարհը, սովորեցրեց մեկ մեկու հանդեպ բարի ու քնարական մոտեցում ունենալ, սիրել միմյանց ու ապրել «բարձր զգացմունքների և մաքուր խոհերի աշխարհում»: Ինչ բնորոշ գնահատանք է տվել Եղիշ Զարենցը՝ իր ավագ գրչակցի պոեզիան համարելով «նախնային խոսքերի գանձարան»: Հայ իրականության մեջ բոլոր ժամանակների համար Տերյանը մնում է բարձր արվեստների տիրակալը: Վկայությունը՝ իր ժամանակակիցների անթաքույց խոստովանանքը հայ մշակույթում նրա զբաղեցրած անփոխարինելի տեղի ու դիրքի մասին ու նաև՝ մեր ժամանակի մշակույ-

թի գործիչների գնահատանքը: Ահավասիկ, Տիգրան Մանուկյանի վերաբերմունքը՝ «Կատարյալ պատկերներ, գույների նրբերանգների, զգացողությունների անասելի ներդաշնակություն, ապրումի կատարյալ բյուրեղ վիճակ, և, մանավանդ այդքան լուռ ասված, առանց կոչականների, առանց արտաքին ծեսների՝ զուտ ներհայաց, զուտ աչքի տեսածի մաքուր ապրում, անխաթար դրսից ներս և հետո՝ բանաստեղծություն... Նա բերեց բանաստեղծական հսկա կուլտուրա... Մարգարե էր Տերյանը՝ լեզվի իմաստություններ բերող, շքեղություն ու լեզվի հետ համապատասխան կենցաղ բերող մարգարե»:

Փորձենք մեծանուն պոետի ծննդյան 125-ամյակի տարին դարձնել տերյանական տարի և ամեն օր այդ մեծ քնարերգուի պոեզիային հաղորդվելու առիթներ ստեղծենք, փորձենք ապրել այն զգացողությունը, ինչ ուներ ու ինչի մասին այդպես սիրով գրում էր Եղիշ Զարենցը. «...Մի զարմանալի՝ քնուշ և խնդագին զգացմունք են ունենում յուրաքանչյուր անգամ, երբ հիշում են, որ այնտեղ, գրասեղանիս դարակում պահված են Տերյանի-հասակա՜նում՝ եղ-խկական նրա ձեռագրերը... նրա ձեռքով գրված այդ թերթիկները... Երբ անչափ տխուր եմ լինում-հանում եմ և՛ նայում... Կարծես արեգակն է պահված իմ գրասեղանի դարակում...»:

Արժե, անշուշտ, որ մեր մեծերի հանդեպ այդ քնուշ վերաբերմունքն ունենանք, և Տերյանի պարագայում, նրա՝ «Բարի հիշեք ինձ ձեր սրտում» հարցմանը սիրով պատասխանենք. «Մենք քեզ պահում ենք մեղքի պես թուփի, ցավի պես խելառ ոսկեշրթա մեր հուշերում»:

Հովհ. ՊԱՊԻԱՆ

Մանվել ԶՈՒԼԱԼՅԱՆ - 80

Նշանավոր արևելագետի հոբելյանը

Օրերս ԳԱ ակադեմիայում մեծ շուքով նշվեց ակադեմիկոս, պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Մանվել Զուլալյանի ծննդյան 80 և գիտամանկավարժական գործունեության 55-ամյա հոբելյանները: Հանդիսությունը բացեց ու հոբելյարին շնորհավորեց ՀՀ ԳԱԱ նախագահ, ակադեմիկոս Ռադիկ Մարտիրոսյանը՝ նշելով. «Մանվել Զուլալյանը մեծ ավանդ ունի մեր պատմագրության ոլորտում, ու նրա գրքերը միշտ շատ բարձր են գնահատվել: Նրա անցած կյանքի ճանապարհին եղել է դժվարին, բայց

նասիրման գործում: Հենց այդ ուսումնասիրություններն են հիմք դարձել Արևմտյան Հայաստանի միջնադարյան պատմության համակարգված և գիտական շարադրանքի համար»:

Հոբելյարի անցած գիտամանկավարժական ուղու և թողած ժառանգության մասին զեկուցումով հանդես եկավ ԳԱԱ Արևելագիտության ինստիտուտի տնօրեն, պրոֆեսոր Ռուբեն Սաֆրաստյանը: «Մանվել Զուլալյանն այն պատմաբաններից է, այն թուրքագետներից, որը ոչ միայն ուսանել է ռուսական արևելագի-

տնօրեն Աշոտ Մելքոնյանը, ՀԴՄՀ պատմության ֆակուլտետի ամբիոնի վարիչ Սիմոն Կարապետյանը, ընդհանուր պատմության ամբիոնի վարիչ Վալերի Դեյչյանը, պրոֆեսոր Պարույր Մուրադյանը, ՀՀ ԳԱԱ Հայագիտության և հասարակական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղար Վլադիմիր Բարխուդարյանը և ուրիշներ: Իսկ ԵՊՀ ռեկտոր, ակադեմիայի թղթակից անդամ Արամ Սիմոնյանը գնահատանքի խոսքերից զատ, հոբելյարին շնորհավորեց բուհի ոսկե մեդալին արժանանալու համար և հատկապես անդրադարձավ նրա աղբյուրագիտական բազմալեզու աշխատություններին ու նաև զարմանալի նվիրումին՝ հանդեպ իր ուսանողները:

Հուզիչ էր ուսանողների ողջույնի խոսքը, որը պրոֆեսոր Մանվել Զուլալյանը համարեց իր գործունեության գնահատանքը ու իր շնորհակալական խոսքը հղեց այն բուհերին, ինստիտուտներին ղեկավարներին, ակադեմիկոսներին, դասախոսներին, որոնք մշտապես եղել են իր կողքին, աջակցել ու տվել հնարավորություններ պատմագիտական աշխատությունների ստեղծման համար: «1947-ին, երբ Հայկաից ծնողներիս հետ հայրենիք եկա, մտքովս անգամ չէր անցնում, որ բարձրագույն կրթություն կստանամ, առավել ևս, որ ակադեմիկոս կդառնամ և այսօրվա իմ մեծարժան օրը կտեսնեմ: Բայց այդ բոլորը կատարվեցին հայրենիքի շնորհիվ, որին ես խորապես երախտապարտ եմ»:

Անդրադառնալով պատմագրությանը՝ ակադեմիկոսը նշեց. «Այսօր էլ մեզ՝ բոլոր հայերիս հուզում է աղբյուրագիտական պատմագրությունը: Ես վաղուց եկել եմ այն եզրակացության, որ աղբյուրագիտական պատմագրությունը գտնվում է անմիջականորեն թուրքական պատմագրության ազդեցության տակ և որ այն հիմնական զինանոցն է: Դա ես նկատել եմ դեռևս 60-70-ական թվականներին, սակայն այն ժամանակ արգելվեց այդ մասին խոսել: Բայց հիմա բոլորն էլ համոզվել են, որ ես այն ժամանակ ճիշտ էի: Ես աշխատել եմ ուղի հարթել, ճանապարհ հարթել, ինչ-որ մի տեղ հաղորդել այդ պատմությունը: Ես այդքան կարող էի, այդքան արեցի, թող ինձանից հետո ավելի լավ անեն»:

Մորիսոն Ռոզոզայի մրցանակի հայ գիտնականին

Վերջերս ամփոփվեցին «Գիտության և կրթության հայկական հիմնադրամի» (ANSEF) հայտարարած ամենամյա մրցույթի արդյունքները, և հայտնի դարձավ, որ Նարինե Վարդանյանը նույնպես մրցանակի արժանացած գիտնականների թվում է:

Շնորհավորում ենք նրան հաջողության առթիվ և թարգմանաբար ներկայացնում Մանրեաբանության ամերիկյան ընկերության (ASM) պաշտոնական Microbe ամսագրում տպագրված հոդվածն այդ մասին:

«Մանրեաբանության ամերիկյան ընկերության Մորիսոն Ռոզոզայի մրցանակը շնորհվում է նախկին խորհրդային Միության, Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի կին գիտնականներին՝ խոշոր գիտական նվաճումների համար: Մրցանակը գնահատանքն է բակտերիոլոգիական բնագավառում կին գիտնականների ավանդի: Տարեկան շնորհվում է երկուսական մրցանակ, որի համար հնարավորություն ունեն պայքարելու 28 երկրների կին գիտնականներ: Մրցանակը ներառում է երկամյա անվճար անդամակցություն ASM-ի և բաժանորդագրություն ASM-ին որևէ ամսագրի՝ իրենց ընտրությամբ:

Նարինե Վարդանյանը հայ է, Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի միկրոբիոլոգիայի և մանրէների ավանդադրման կենտրոնի երկրամանրեաբանության լաբորատորիայի վարիչ, 1992 թվականից: Ավարտելով Երևանի պետական համալսարանը՝ նա աշխատանքի է անցել ՀՀ ԳԱԱ Միկրոբիոլոգիայի ինստիտուտում, որտեղ պաշտպանել է թեկնածուական, ապա նաև դոկտորական ատենախոսությունները: 1993 թվականին Ն. Վարդանյանը արժանացել է Սորոսի մրցանակի՝ քեմոթերապիա բակտերիաների նոր տեսակի ուսումնասիրության համար: 1995-ին նա ստացել է Հայաստանի ամերիկյան համալսարանի դրամաշնորհը: Ն. Վարդանյանը հեղինակ է մենագրության և ավելի քան 4 տասնյակ գիտական հոդվածների և արտոնագրերի: Նրա գիտական հետաքրքրության շրջանակը լայն է՝ ենթոմապարզ բակտերիաներ, մանրեաբանական տրանսֆորմացիա, սինթետիկ պոլիմերների քայքայում, բակտերիալ ֆերմենտներ և այլն: Սակայն Ն. Վարդանյանի 25-ամյա գիտական գործունեությունը նվիրված է քեմոթերապիա բակտերիաների հիմնարար և կիրառական հիմնախնդրներին, որոնք անմիջականորեն առնչվում են մետաղների մանրեաբանական կորզմանը: Ն. Վարդանյանը քեմոթերապիա բակտերիաների բնագավառի միակ մասնագետն է Հայաստանում:



Մելիսեն ՀԱՊՐՅԱՆ




Նկարում. (աջից) Մանվել Զուլալյանը, պրոֆեսորներ Նիկոլայ Հարությունյանը, Պարույր Մուրադյանը

մշտապես վերելքի և մեծ, պատվավոր նվաճումների ողիսական»: ՀԴՄՀ համալսարանի ռեկտոր, պրոֆեսոր Արտուշ Դուկասյանը իր ողջույնի խոսքում նշեց. «Մենք բարձր ենք գնահատում անցած տասնամյակների ընթացքում կատարած Ձեր գիտական վաստակը, որը լուրջ ներդրում է մեր երկրում պատմագիտության զարգացման բնագավառում: Ազատ տիրապետելով մի քանի լեզուների՝ Դուք կատարել եք մեծ ծավալի աղբյուրագիտական աշխատանք՝ հայոց և Օսմանյան կայսրության միջնադարյան պատմության ամենանկնճռոտ հիմնախնդրների ուսում-

նության հիմնադիրներից, այլ նաև եղել է ռուս արևելագետների, թուրքագետների գիտական կուլեգան և նրանց հետ համատեղ աշխատություններ է ստեղծել»: Մ. Զուլալյանի գործունեության կարևոր փուլին անդրադառնալով պրոֆ. Սաֆրաստյանը նշեց, որ գիտական բազմաթիվ աշխատությունները թուրքագիտության, օսմանագիտության, հայագիտության ու կեն ֆոնդում են գտնվում և այդպիսին էլ կմնան տասնամյակներ հետո նաև:

Հոբելյարին շնորհավորական ուղերձներ հղեցին ու գնահատանքի ջերմ խոսքեր հնչեցրեցին ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի

Մարիետա ՄԱԿԱՐՅԱՆ



ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամների հանրագիտարան

Տեխնիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ՀՀ ԳԱԱ արտասահմանյան անդամ Ալեքսանդր Բաղդասարյանը խոշոր գիտնական է, ակուստատեխնոլոգիայի ոլորտի և հեռահաղորդակցման տեխնոլոգիաներում դրանց բազմաթիվ կիրառումների հայտնի մասնագետ։ Ա. Բաղդասարյանը ծնվել է 1946 թվականի փետրվարի 10-ին, Բաքու քաղաքում։

Նրա հայրը՝ Սերգեյ Բաղդասարյանը (ծնվել է 10.08.1913 Լեռնային Ղարաբաղի շրջանի Ազոխ գյուղում), ակադեմիկոս է եղել ԽՍՀՄ-ի Գիտությունների ակադեմիայի ակադեմիկոս, Գիտության վաստակավոր գործիչ։

Մայրը՝ Զինաիդա Բեյսևան, մասնագիտությամբ բժիշկ է, Հայրենական մեծ պատերազմի մասնակից։

1964 թվականին Ալեքսանդր Բաղդասարյանը ընդունվել է Մոսկվայի ֆիզիկատեխնիկական ինստիտուտ։ 1967 թվականին փոխադրվել է Մոսկվայի պետական սարահանոցի ֆիզիկայի ֆակուլտետ, որն ավարտել է 1969 թվականին «տեսական ֆիզիկա» մասնագիտությամբ։ Կյանքի այդ շրջանը նրա համար եղել է ընտրության բարդ շրջան, քանի որ թե՛ դպրոցում և թե՛ ԲՈՒՀ-ում գերազանց ուսման հետ միասին նա փայլուն հաջողությունների էր հասնել չախմատում։ Նա հանրապետության բազմակի չեմպիոն էր և մի շարք համամիութենական մրցումների հաղթող՝ ինչպես անհատական մրցաշարերում, այնպես էլ թիմային առաջնություններում։

1969-1974 թվականներին Ալեքսանդր Բաղդասարյանը աշխատել է միկրոսխեմատեխնիկայի Հատուկ կոնստրուկտորական բյուրոյում, Երևանի միկրոէլեկտրոնիկայի գիտահետազոտական տեխնոլոգիական ինստիտուտում, որտեղ եղել է մի շարք աշխատանքների պատասխանատու կատարող, որոնք վերաբերում էին ինտեգրալ սխեմաների, ճնշման, խոնավության, ջերմաստիճանի միկրոտվիչների և ակուստատեխնոլոգիայի սարքերի մշակմանը։ Նա միշտ ջերմությամբ է հիշում այդ տարիների իր ընկերների և մտերիմների մասին, որոնք ԽՍՀՄ-ում առաջին անգամ մեքենաշինության գիտահետազոտական տեխնիկական ինստիտուտում (ՄԳՀՏԻ) (տնօրենն էր Գ. Ս. Չոլախյանը) ձեռնամուխ եղան այն ժամանակների համար եզակի մշակումների։

1974 թվականից, ասպիրանտուրա ընդունվելուց հետո, Ա. Բաղդասարյանի հետագա բոլոր աշխատանքները կապված են ռադիոտեխնիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի (ՌԷԻ) հետ, ուր և աշխատում է մինչ օրս՝ որպես գլխավոր գիտաշխատող։ Նրա հետաքրքրությունների ոլորտում են ինչպես գիտական խնդիրների շատ լայն շրջանակ, այնպես էլ հարցերի կապված դրանց ինժեներական մշակմանը և արտադրության մեջ ներդրմանը։

Այս կապակցությամբ բավական է նշել փայլուն պաշտպանած թեկնածուականը՝ «Ամպլիտուդով մոդուլացված մակերևու-

թային ակուստիկ ալիքների (ՄԱ) փոխակերպիչների հետազոտությունը և դրանց հիման վրա ակուստատեխնոլոգիային սարքերի մշակումը» և դոկտորական ատենախոսությունը՝ «Ակուստատեխնոլոգիային սարքերի մշակումը և դրանց օգտագործումը ինֆորմացիայի ընդունման, հաղորդման և մշակման սարքավորումներում»։

ԽՍՀՄ ԳԱ Կոտեյնիկովի անվան ՌԷԻ-ում աշխատելու տարիներին նա բախտ է

Նրա լուծած խնդիրները՝ ԽՍՀՄ ԳԱ և ՌԳԱ-ի նվաճումներ


Ալեքսանդր ԲԱԴԱՍԱՐՅԱՆ

ունեցել լինել ականավոր գիտնական, ակադեմիկոս Յուրի Վասիլևիչ Գուլյակի աշակերտը և բեղմնավոր համագործակցություն է ունենալ նրա հետ։ Նրանց ստեղծագործական, գիտական և ինժեներական համագործակցության շնորհիվ կազմակերպվել են «Ակուստատեխնոլոգիային սարքեր» ծախսային լաբորատորիան և ՌԷԻ-ի կից ԽՍՀՄ կապի միջոցների արդյունաբերության փորձարարական արտադրություն՝ ճապոնական «Murata» և ֆրանսիական «Tomson-CSF» ֆիրմաների հետ համատեղ, Մինսկի «Գորիզոնտ» արտադրական միավորման և Չեռկասկի ռադիոգործարանում կազմակերպվել է հեռուստացույցների ֆիլտրերի խոշոր սերիական արտադրություն, հեռահաղորդակցության տեխնոլոգիաների ոլորտում իրականացվել են մի շարք գիտահետազոտական և փորձարարական կոնստրուկտորական մշակումներ և արտադրություններ։ Այս համագործակցությունը շարունակվում է արդեն 25 տարի՝ 1984 թվականից մինչ օրս։

1984-ից մինչև 1987 թվականները Ա. Բաղդասարյանը ղեկավարել է մի շարք աշխատանքներ, որոնք վերաբերում են ֆունկցիոնալ էլեկտրոնիկային և կապի միջոցների զարգացման հեռանկարների կամպատեքստում, մասնակցել է ճյուղային միկրո և ֆունկցիոնալ էլեկտրոնիկայի զարգացման համակարգային նպատակային ծրագրերի նախապատրաստմանը, եղել է գիտաշխատող, ԽՍՀՄ կապի մի-

ջոցների արդյունաբերության նախարարության «Կապի միջոցների ֆունկցիոնալ էլեկտրոնիկա» ԳՏԽ-ի կոորդինացիոն խորհրդի բաժանմունքի նախագահի տեղակալ։

1987 թվականից մինչ օրս (իսկ 1990-ից որպես «Էլկո» ԳԱ զխավոր տնօրեն) Ալեքսանդր Բաղդասարյանը գիտահետազոտական և փորձարարական ստորակտորական մի շարք մշակումների ղեկավարում և գլխավոր կոնստրուկտորն է։ Աշխա-



տանքներն իրականացվել են կառավարման համակարգերի ռուսական գործակալության (ԿԴԳ) սարքավորում արտադրող ձեռնարկությունների, ՌԴ պաշտպանության նախարարության, ՌԴ Կապի պետկոմի, ՌԴ նախագահին կից պետտեխնոմի, ՌԳԱ կիրառական պրոբլեմների բաժանուսուքը և Սոսկվայի կառավարության կարիքների համար։ Այս աշխատանքների շրջանակներում նրա կողմից լուծված հիմնարար խնդիրները բազմիցս նշվել են որպես ԽՍՀՄ ԳԱ և ՌԳԱ-ի նվաճումներ։

Ալեքսանդր Բաղդասարյանի գիտական հետազոտությունների և ինժեներական մշակումների հիմնական արդյունքները հրապարակվել են ավելի քան 300 գիտական հոդվածներում, միջազգային գիտաժողովներում վավերացվել ավելի քան 70 հեղինակային վկայագրերում և Մեծ Բրիտանիայի, Գերմանիայի, ԱՄՆ-ի, Ֆրանսիայի, Ճապոնիայի և այլ երկրների ավելի քան 40 արտոնագրերում, ութ մենագրություններում և ուսումնական ձեռնարկներում։

Ալեքսանդր Բաղդասարյանը կատարում է գիտակազմակերպչական, մանկավարժական և հասարակական մեծ աշխատանք։ Լինելով Ա. Մ. Պրոխորովի անվան ինժեներական գիտությունների ակադեմիայի գլխավոր գիտական քարտուղարը, նա մասնակցում է ակադեմիայի ինժեներական հետազոտությունների կոորդինացման աշխա-

տանքներին՝ ակադեմիայի բոլոր ուղղություններով։ Ակադեմիայի գիտատեխնիկական նվաճումների համար ինժեներական ակադեմիայի կողմից Ալեքսանդր Բաղդասարյանը պարգևատրվել է Ա. Մ. Պրոխորովի, Ա. Ի. Բերգի մեդալներով։ Պրոխորովի մրցանակի դափնեկիր է։ Ակադեմիայի Ուրալի միջնադարյան բաժանմունքի կողմից պարգևատրվել է Ա. Ս. Պոպովի անվան մեդալով և մրցանակով։

1993-1997 թվականներին Ա. Բաղդասարյանը «Յու. Ա. Գագարինի հիմնադրամի» տնօրենն էր։ Նրա անմիջական ղեկավարությամբ մշակվել է «Միր» ռուբոնային կայանի օպերատոր-հետազոտողի աշխատանքային տեղը, որը հաջողությամբ ցուցադրվել է մի շարք միջազգային ցուցահանդեսներում՝ Ժնևում («Տեխնո-91», «Տեխնո-95»), Ռիո-դե-ժանեյրոյում («Տեխնո-Ամերիկա-96»), Սինգապուրում («Տեխնո-Ասիա-97»)։ Միաժամանակ նա կազմակերպել է մի շարք հեռուստական լուրեր «Միր» ռուբոնային կայանի, «Էներգիա» ՀՏԿ-ի, «Տեխնո» ԲԲԸ-ի, Պաշտպանության, «Ռուստեխնո» ԲԲԸ-ի և «Յու. Ա. Գագարինի» անվան հիմնադրամի՝ մասնակցությամբ։

Ներկայումս Ա. Բաղդասարյանը ՌԳԱ Վ. Ա. Կոտեյնիկովի անվան ՌԷԻ-ում գլխավոր գիտաշխատող է, Ա. Մ. Պրոխորովի անվան ինժեներական գիտությունների ակադեմիայի գլխավոր գիտական քարտուղարը, էլեկտրոնիկայի և ռադիոտեխնիկայի մասնագիտացման ԲՈՒՀ-ի փորձագիտական խորհրդի անդամ, մի շարք ամսագրերի խմբագրական խորհուրդների անդամ և դոկտորական ատենախոսությունների պաշտպանության խորհրդի անդամ։ 2008 թվականին Ալեքսանդր Բաղդասարյանը ընտրվեց Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի արտասահմանյան անդամ։

Ա. Բաղդասարյանը գիտակազմակերպչական, ինժեներական և հասարակական աշխատանքների համար բազմիցս արժանացել է բարձր պարգևների։

Ալեքսանդր Բաղդասարյանն ունի երեք զավակ. որդին՝ Սերգեյ Բաղդասարյանը (1982 թվականին ծնված) 2004 թվականին ավարտել է Բաումանի անվան Մոսկվայի բարձրագույն տեխնիկական ուսումնարանը «ռադիոլոգիա» մասնագիտացմամբ։ 2005 թվականին պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն։ Ներկայումս Սերգեյ Բաղդասարյանը «Ռադիոհաճախային իդենտիֆիկացիայի և կապի տեխնոլոգիաների» գիտաարտադրական ձեռնարկության գլխավոր տնօրենն է։

Արտակ ՄԿՐՏՉԱՆ

Ֆիզիկամաթեմատիկական գիտությունների դոկտոր, ՀՀ ԳԱԱ ֆիզիկայի կիրառական պրոբլեմների ինստիտուտի տնօրեն

ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆ ՈՒ ԴԻՎԱՆԱԳԵՏԸ. ԽՈՋԱ ԻՍՐԱՅԵԼ ՄԱՐԶԱՐ

Հնդկահայ զաղութի պատմության մեջ մեծ դերակատարություն են ունեցել հայ վաճառականները։ Խորությամբ ըմբռնելով ժամանակի պահանջները և ճիշտ գնահատելով իրենց ուժերը՝ նրանք ոչ միայն տարբեր ուղղություններով առևտրական գործունեությամբ էին զբաղվում, այլ նաև երկրում և տեղի կառավարիչների մոտ ունեցած իրենց ազդեցիկ դիրքով կարողանում էին անգամ քաղաքական լուրջ խնդիրներ լուծել։ Հայ վաճառականների քարի համբավը տալիս էր ամենուր։ Նրանց մասին դրվատանքով են խոսում նաև պահպանված բազմաթիվ փաստաթղթերն ու վավերագրերը։ Օրինակ՝ 1699 թ. Անգլիական Արևելահնդկական ընկերության արձանագրություններից

մեկում հայերին գովաբանելուց բացի ասվում է. «Անկասկած, նրանք աշխարհի ամենահին վաճառականներն են»։

Հայ վաճառականների համար նպատակադրված էին ստեղծվել հատկապես Հնդկաստանի Մոլայ կայսրության ժամանակ, երբ մի քանի շահեկան պայմանագրերի և կայսրերի քարյացական վերաբերմունքի շնորհիվ ծաղկում ապրեց միջազգային առևտուրը, հայ և եվրոպացի վաճառականներին բազմաթիվ արտոնություններ տրվեցին։

ԺԷ-ԺԸ դդ. հայ վաճառականներից էր Մուրաթի երեկի հայ վաճառական Խոջա Փանոս Զալաթբաթի եղբորդի Խոջա Իսրայել Մարաթը, ով իր ջանասիրտությամբ և

խելացիության շնորհիվ կտրեղենի պարզ առևտրականից դարձել էր հարուստ վաճառական և նահանգում լուրջ դիրք ունեցող քաղաքական գործիչ։ Նրա հետ հաշվի էին մատում հատկապես օտարները։ Դժբախտաբար, ջողայեցի այս վաճառականի մասին կենսագրական տվյալները սակավ են, անհայտ են նրա ծննդյան և մահվան թվականները։ Մակայն պահպանված մի քանի տեղեկություններն էլ բավարար են՝ պատկերացում կազմելու նրա լայն գործունեության մասին, որոնց մեջ պարզորոշ երևում է հայ վաճառականի դիվանագիտական կառուցվածքները։

Պատմական փաստերը վկայում են, որ Խոջա Իսրայելն իր անձնական կապերով

մեծապես օգնեց անգլիացիներին՝ Բենգալիայում հաստատվելու և ավելի բազմ գործունեություն վարելու համար։ Երբ 1690-ական թթ. անգլիացիները հաստատվեցին Կալկաթայում, նրանք ցանկանում էին գործակալատուն և մեծ ամրաց չինել՝ ապրանքներն ապահով պահելու համար։ Բայց դրա համար անհրաժեշտ էին իտալականներ և ամենակարողը՝ Մոլայ կայսեր արտոնությունը։ Անգլիացիները քաջ գիտակցում էին, որ Մոլայի կառավարիչների մոտ իրենց համար կարող են քաղելուսել և միջնորդներ լինել միայն հայերը, ովքեր տարիների աշխատասիրության և հավատարմության շնորհիվ վայելում էին տեղի կառավարիչների համակրանքն ու հարգանքը։ Ուստի ընտրությունը կանգնում է ժամանակի ճշմարիտ հայերից մեկի՝ Խոջա Իսրայել Մարաթի վրա։

1697 թ. Մոլայ կայսեր դեմ ապստամբություն է բռնկվում, որը գլխավորում էր քանակի հրամանատար Զարադ- >7

Նշվեց ՏՏ ԳԱԱ ակադեմիկոս Լենսեր Աղալովյանի 70-ամյա հոբելյանը

Գիտության տարածքում մտնում են բազում մարդիկ և փորձեր նպատակներով. ոմանք՝ փառքի, իսկ ոմանք՝ հարստության ծեղոք բերելու համար: Սակայն կան գիտության նվիրյալներ, ովքեր մտնում են այդ տարածքը ու վերածվում գիտության իսկական ջրմբի: Հայկական իրականության մեջ գիտության այդ նվիրյալներից է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս, մեխանիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Լենսեր Աղալովյանը, ում 70-ամյա հոբելյանը նշվեց վերջերս՝ Առևտրաբանության և ակադեմիկոս Լենսեր Աղալովյանի համերգային համաժողովի շրջանում: Ներկայացուցիչների մասնակցությամբ: Հայ ժողովրդի ազգային զարթոնքի օրերին՝ Նախորդ դարի 80-ականների վերջերին, Լ. Աղալովյանը, ինչպես հազարավոր հայորդիներ, կանգնած էր հայոց դարավոր Արցախի համար մղվող պայքարի ակունքներում: Արցախ աշխարհի ծնունդ ականավոր գիտնական հայրնի այն անձանցից է, ում ջանքերի շնորհիվ հնարավոր եղավ մեր հաղթանակը: Լ. Աղալովյանը Ջեմրիջի Միջազգային կենսագրական կենտրոնի կողմից, ճանաչվել է 2009 թ. 100 լավագույն գիտնականներից մեկը: Լ. Աղալովյանին զանազան բնագավառներում և շնորհավորել է Հանրապետության Նախագահ Սերժ Սարգսյանը: Հոբելյանի կապակցությամբ ԼՀՀ վարչապետ Արա Հարությունյանի կարգադրությամբ գիտնականին շնորհվել է «ԼՀՀ վարչապետի մեդալ»՝ շքանշան:

Գիտության երախտավորը



ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Լենսեր Աղալովյանը ծնվել է 1940 թ. ԼՀՀ Մարտակերտի շրջանի Զոլատակ գյուղում՝ մանկավարժների ընտանիքում: 1956 թ. ընդունվել է Երևանի պետական համալսարանի մեխանիկա-մաթեմատիկական ֆակուլտետ, որը գերազանցությամբ դիպլոմով «Մեխանիկա» մասնագիտությամբ ավարտել է 1961 թ.: Ուսման տարիներին

ստացել է այդ տարիների ամենաբարձր (Լենինյան) կրթաթոշակ: Համալսարանն ավարտելուց հետո թողնվել է աշխատանքի նույն ֆակուլտետում՝ որպես ասիստենտ: 1963-66 թթ. սովորել է համալսարանի ասպիրանտուրայում: 1966 թ. պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն, և նրան շնորհվել է ֆիզմաթ. գիտ. թեկնածուի գիտական աստիճան: 1966-69 թթ. աշխատել է Պետական համալսարանի Բարձրագույն մաթեմատիկայի ամբիոնում՝ որպես ավագ դասախոս:

1969 թվականից աշխատել է ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտում՝ սկզբում որպես ավագ գիտաշխատող, իսկ 1987-2006 թթ. որպես ինստիտուտի տնօրեն: Համաձայն ՀՀ կառավարության և ԳԱԱ նախագահության որոշումների՝ 65 տարին լրացած տնօրենների վերաբերյալ, 2006 թ. սեպտեմբերից հանդիսանում է տնօրենի խորհրդական, միաժամանակ ինստիտուտի «Բարակապատ համակարգերի մեխանիկա» բաժնի վարիչ: Դասախոսում է նաև Երևանի պետական համալսարանի մաթեմատիկայի և մեխանիկայի ֆակուլտետում:

1980 թ. Լ. Աղալովյանին շնորհվել է ֆիզմաթ. գիտ. դոկտորի գիտական աստիճան, իսկ 2000 թ. պրոֆեսորի կոչում: 1987 թ. չորս փուլից բաղկացած մրցույթով ընտրվել է ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտի տնօրեն, իսկ 1993, 1998, 2004 թվականներին նույն ընտրական համակարգով վերընտրվել է տնօրեն: 1996 թ. ընտրվել է ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս:

Միջազգային գիտական մրցույթներին մասնակցելու արդյունքներով ստացել է Սորոսի (1994-1995 թթ.), INTAS 97-1140 (1999-2001 թթ.), ISTC-A651 (2002-2004 թթ.) INTAS 03-51-5547 (2004-2006 թթ.), ISTC-A892 (2005-2006 թթ.), INTAS-06-100017 (2007-2008 թթ.) դրամաշնորհներ՝ որպես ներկայացված հայտերի գիտական ղեկավար և կատարող:

1995 թ. Լ. Աղալովյանին շնորհվել է Վիկտոր Համբարձումյանի անվան մրցանակը (ԱՄՆ-ի հայ գիտնականների և ճարտարագետների միություն): 1995 թ. ընտրվել է Ռուսաստանի Տեսական և կիրառական մեխանիկայի Ազգային կոմիտեի անդամ: Անդամ է «European Association for the Control of Structures-ASC» (2000 թ.), «International Applied Mechanics» ամսագրի խմբագրության (2003 թ.):

Լ. Աղալովյանի ղեկավարությամբ 12 գիտաշխատողներ պաշտպանել են թեկնածուական, իսկ երկուսը՝ դոկտորական ատենախոսություններ: Հեղինակ է 1997 թ. Սոսկվայի «Նաուկա», իսկ 2005 թ. ՀՀ ԳԱԱ հրատարակչությունների կողմից հրատարակված լայնածավալ մենագրությունների՝ Լ. Ա. Ագալովյան. Асимптотическая теория анизотропных пластин и оболочек. Москва, Наука, Физматлит. 1997.-414с. Լ. Ա. Ագալովյան, Ր. Ս. Գեորգյան. Неклассические краевые задачи анизотропных слоистых балок, пластин и оболочек. Ереван. Изд-во НАН «Гитутюн», 2005.- 468с. և շուրջ 150 գիտական հոդվածների, որոնց զգալի մասը տպագրված է միջազգային լայն ճանաչում ունեցող ամսագրերում և միջազգային գիտաժողովների ժողովածուներում:

Լ. Աղալովյանը ՀՀ ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտին կից գործող դոկտորական և թեկնածուական ատենախոսությունների պաշտպանության մասնագիտական խորհրդի նախագահն է՝ խորհրդի ստեղծման օրվանից (1990 թվականից):

Միջազգային կենսագրական կենտրոնի կողմից (IBC,

Cambridge, England) ճանաչվել է որպես «Top 100 Scientists-2009» գիտնականներից մեկը, իսկ Ամերիկյան կենսագրական ինստիտուտը (ABI-USA) նրան շնորհել է «Gold Medal For Armenia»:

Գիտական աշխատանքները վերաբերում են անիզոտրոպ հեծանքների, սալերի և թաղանթների ասիմպտոտիկ տեսության կառուցմանը, առածականության տեսության հարթ և տարածական, ստատիկական ու դինամիկական խառը եզրային խնդիրների լուծմանը, կառուցվածքների հիմքերի և հիմնատակների հաշվարկի կիրառական եղանակների տեսական հիմնավորման ու հաշվարկի նոր մոդելների առաջադրմանը, շերտավոր միջավայրերում ալիքների տարածմանը, կառուցվածքների վրա սեյսմիկ ալիքների ազդեցությունների ուսումնասիրման հարցերին: Նրա կողմից կառուցվել է անիզոտրոպ հեծանքների, սալերի և թաղանթների ասիմպտոտիկ տեսությունը, որը հնարավորություն է ընձեռել պարզել Բեռնուլիի, Կիրխոֆ-Լյավի վարկածների հիման վրա կառուցված տեսությունների կիրառելիության շրջանակները, առավելագույն ձևով վեր հանել անիզոտրոպիայի և շերտայնության ազդեցությունները, նշել այդ տեսություններով ստացված արդյունքների ճշգրտման հստակ ուղիներ: Ի տարբերություն մյուս տեսությունների, սալերի համար նրա կառուցած ասիմպտոտիկ տեսությունը հաշվի է առնում ամենաընդհանուր ա-նիզոտրոպիան (21 առածականության գործակից):

Լ. Աղալովյանի կողմից առաջին անգամ ուսումնասիրվել են տեխնիկայում լայնորեն օգտագործվող սալերի և թաղանթների լարվածային-դեֆորմացիոն վիճակների ուղղման հարցերը, որոնց դիմային մակերևութների վրա տրված են տեղափոխման վեկտորի բաղադրիչները կամ խառը եզրային պայմաններ: Նրա կողմից ապացուցված է, որ այդ տիպի բարակ մարմինների համար կիրառելի չեն Բեռնուլիի, Կիրխոֆ-Լյավի դասական վարկածները: Ի հայտ են բերված դասականից սկզբունքորեն տարբերվող ասիմպտոտիկ կարգեր լարման թեժզորի և տեղափոխման վեկտորի բաղադրիչների համար: Ստացված արդյունքները հիմք են հանդիսացել նոր ուսումնասիրությունների ինչպես հանրապետությունում, այնպես էլ նրա սահմաններից դուրս:

Հեռանկարային են Լ. Աղալովյանի կողմից վերջին տարիներին ստացված կարևորագույն արդյունքները հեծանքների, սալերի և թաղանթների սեփական և ստիպողական տատանումների, շերտավոր միջավայրերում ալիքների տարածման, երկրաշարժերի ժամանակ կառուցվածքների վրա սեյսմիկ ալիքների վնասակար ազդեցությունների նվազեցման բնագավառներում: Այստեղ զուգակցվում են կիրառական խնդիրների լայն բազմազանությունը և նրանց լուծման մաթեմատիկական հիմնավորված մեթոդների կիրառումը:

Լ. Ա. Աղալովյանը անցյալ դարի 60-ականների կեսերից ակտիվորեն մասնակցում է Արցախյան շարժմանը: Եվ Երևանի պետական համալսարանում, և՛ Գիտությունների ակադեմիայում նա բազմիցս բարձրացրել է պաշտպանել է Արցախյան հիմնահարցը: 1966-1968 թթ. Երևանի պետական համալսարանում նա Արցախի հիմնահարցը բարձրացնողներից ու հետևողականորեն պաշտպանողներից մեկն էր: 1988 թ. փետրվարի 19-ի Երևանի Ազատության հրապարակի հայտնի հանրահավաքը նրան լիազորում է բանակցություններ վարելու Հանրապետության ղեկավարության և Երևան ժամանած Լուկյանովի և Դուգինի հետ:

1991 թ. նրա նախաձեռնությամբ ստեղծվում է «Արցախ-Հայաստան» հասարակական-քաղաքական կազմակերպությունը /գրանցվել է 1992թ./, որի նախագահն էր 1992-1996 թթ.: 1990-91 թթ. իր վրա վերցնելով մեծ պատասխանատվություն, ԳԱԱ Մեխանիկայի ինստիտուտում կազմակերպվում են ռազմական հատուկ դասընթացներ գնդապետ Գեորգի Պետրոսյանի ղեկավարությամբ, որոնցում իրենց մարտական պատրաստությունն են ստացել հայաստանաբնակ արցախահայերից բաղկացած շրջախմբերը և այնուհետև մասնակցել արցախյան ազատագրական մարտերին: Նա «Ազատագրված տարածքների պաշտպանություն» հասարակական նախաձեռնության հիմնադիր անդամ է:



Նվիրումի 60 տարիներ

Առաջինը, որ բնորոշ է Լենդրոշ Ազիզբեկյանին, բարի ժպիտն է ու սիրալիր հայացքը: Աչքերը միշտ ժպտում են, երբ բարևում է և ողջունում ծանոթ-բարեկամներին: Իսկ նրանք՝ այդ ծանոթները, անչափ շար են, որովհետև ահա 60 տարի Լենդրոշ Ազիզբեկյանը՝ մարդամոր ու բարի այդ մարդը, աշխատում է Հայաստանի Գիտությունների ակադեմիայի համակարգում, թեև, ըստ էության, գիտության հետ նրա կապը միջնորդավորված է: Սակայն այս մասին քիչ հետո:

Լենդրոշ Ազիզբեկյանի մասին մեր պատմությունը սկսվում է այն օրից, երբ Գեղարքունի (Էջմիածնի շրջան) միջնակարգ դպրոցն ավարտած պատանուն գորակոչեցին բանակ: 1944 թվականն էր և պարերազմի ավարտին կար դեռևս մի ամբողջ տարի:

Նրա ծառայությունն սկսվեց 261-րդ հայկական հրաձգային դիվիզիայի 978-րդ գնդում, որը փեղակաված էր խորհրդա-թուրքական սահմանում: Սահմանն անցնելու և նախնյաց հողերն ազատագրելու հույսը համակել էր բոլոր զինվորներին և սպաներին: Սակայն երազանքները չիրականացան. 1945-ից նա արդեն եռակի շքանշանակիր հայկական Թ-ամանյան դիվիզիայի շարքերում էր: Այսպես նկատեցին գրագետ և բանխմաց պատանուն և փեղակոխեցին դիվիզիայի «Կարմիր զինվոր» թերթի խմբագրատուն՝ որպես ավագ գրաշար: Լենդրոշ Ազիզբեկյանը գորացրվեց 1950 թվականին և աշխատանքի անցավ Հայաստանի Գիտությունների ակադեմիայի փայտաբանության դեպարտամենտում:

Այսօրվա փայտագրական գործին ծանոթ մարդը հազիվ թե պարկերացնի, թե ինչ ծանր, գրագիտություն, հասրերաբարություն և մեծ սեր պահանջող մասնագիտություն էր այն ժամանակ գրաշար լինելը: Արձեք փառերով լցված հարյուրավոր արկղերի միջից գրաշարը մեկ-մեկ հանում էր փառերը, շարում իրար կողքի, դարձնում բառ, հեղուկ նախադասություն ու պարբերություն և վերջապես ամբողջական լուր կամ հոդված: Մրուր ձեռքերով, ամբողջ օրը արձեռն թույլն «ըմբռնեմ» գրաշարը գոհունակությամբ էր սրտանում, երբ սրբագրիչները սխալներ քիչ էին գտնում և գովում էին գրաշարի վարպետությունը: Իսկ Ազիզբեկյանին միշտ գովում էին: Եվ Երևանի նաև այդ էր պարգևատրվել, որ 1958-ին նրան նշանակեցին փայտաբանի փոխտեղի փեղակալ: 1953-ին Ազիզբեկյանը փեղակոխվեց Հայաստանի Գիտությունների ակադեմիայի հրապարակչություն՝ որպես ավագ փեղակոխական խմբագիր, իսկ 1960 թվականին նշանակվեց նույն փայտաբանի գրաշարական արտադրամասի պետ:

Աշխատանքին զուգընթաց նա 1964-ին ընդունվեց և 1970 թվականին ավարտեց Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետը (հեռակա) և նույն թվականին էլ նշանակվեց փայտաբանի փոխտեղի: Տպարանի կոլեկտիվը գրկաբաց ընդունեց նոր փոխտեղին, որովհետև իրենց էր, յուրային էր, արդարամիտ էր ու բարի: Ազիզբեկյանը նաև, երբ պետք էր, պահանջուր էր, խաղաղասեր և ամեն ինչ անում էր ԳԱԱ փայտաբանի վարկը բարձր պահելու համար:

Նրա փնտրիչության օրոք փայտագրվել են մենագրություններ, գիտական աշխատություններ, որոնց հեղինակները բարձր են գնահատել փայտագրության որակը, ձևավորումը, ընդհանուր տեսքը: Նրա ղեկավարության տարիներին իրականացվել են բազում բարձրարժեք և բարձրորակ աշխատանքային հրապարակություններ՝ «Հայ ժողովրդի պատմություն», «Հայ գրականության պատմություն», «Հեղինակ Դեմիրճյանի, Նովիանյան Թ-ումանյանի, Դանիել Վարուժանի, Ալեսե Բակունցի ստեղծագործությունների լիակատար ժողովածուները և այլն:

Ամեն անգամ, երբ նոր հրապարակված գրքի «սիգնալ» օրինակը հայտնվում էր փոստին սեղանին, պետք էր փնտրել, թե նրա մարմնը ինչպես էին շոյում-փաղաքում գիրքը, ինչպես է նա ըմբռնվում նոր փայտագրության անկրկնելի բույրը: Այդ բույրը գգում, հասկանում և վայելում են միայն ու միայն ճշմարիտ պոլիգրաֆիստները: Իսկ Լենդրոշ Ազիզբեկյանը պոլիգրաֆիստ է՝ կոչումով և նվիրվածությամբ:

Լենդրոշ Ազիզբեկյանը պարգևատրվել է Հայրենական պարգևազմի 2-րդ աստիճանի շքանշանով և բազմաթիվ մեդալներով: Երկարամյա և անբասիր աշխատանքի համար նա արժանացել է ՆԽՄՀ Գերագույն խորհրդի պարգևի, ՏՏ ԳԱԱ շնորհակալագրերի, իսկ Գիտությունների ակադեմիայի «Աստղաֆիզիկա» ամսագրի գեղեցիկ և ճաշակով ձևավորման համար՝ հարուկ մրցանակի: Ի պարիվ ԳԱԱ «Գիտություն» հրապարակչության փնտրիչության, Մեծ հայրենականի և աշխատանքի վերաբերյալ այսօր էլ շարունակում է աշխատել, գրադրել իր կյանքի սիրած գործով և իր հարուստ գիտելիքները փոխանցել երիտասարդ պոլիգրաֆիստներին:

Մարդն էր նրան քաջամոլություն և իր ճշմարիտ վաստակը վայելելու կյանքի երկար փորձներ:

Զրային պաշարների արդյունավետ օգտագործումը և Սևանի մակարդակի բարձրացումը ազգային նշանակության կարևորագույն գերխնդիր է

ՎԼԱԴԻՄԻՐ ՄՈՎՍԻՍՅԱՆ

ՀՀ նախագահին առընթեր Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովի նախագահ

(Սկիզբը՝ նախորդ համարում)

Սևանա լճի բնապահպանական ծրագրերի շրջանակներում սկսվել են Սևան, Գավառ, Մարտունի, Վարդենիս և Ջերմուկ քաղաքների կոյուղու ցանցերի վերականգնման աշխատանքները: Եռտոկ կակսվի նաև Գավառում, Մարտունիում և Վարդենիսում կոյուղու ծառքման կայանների շինարարությունը: Այս աշխատանքները կավարտվեն առաջիկա երկու տարում:

ՀՀ նախագահի ակտիվ միջամտությամբ կասեցվել է Արարատի ոսկու կորզիչ գործարանը Սևանի ավազանի Սոտքի տեղամաս տեղափոխելու գործընթացը, որով կանխվեց Սևանի ջրերը ցիանական միացություններով ու զանազան միկրոտարրերով աղտոտելու օրինասկան վտանգը:

Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովը ուսումնասիրությունների ու հանգամանակի ջննդարկումների արդյունքում մշակել և ՀՀ կառավարության ջննարկմանն է ներկայացրել մի շարք առաջարկություններ, որոնք ուղղված են Սևանա լճում ձկան պաշարների պահպանման, ավելացման, վերարտադրության, ինչպես նաև ձկան որսի ծավալների և կանոնների պահպանմանը, Սևանա լճից ոռոգման նպատակով ջրի բացթողման խնդրի, ինչպես նաև ոռոգման ջրի բացթողման ծավալների ժամկետների և ոռոգման ջրի կորուստների նվազեցմանը, Սևանա լճի մակարդակը մինչև 1905 մ բացարձակ միջը բարձրանալու հետևանքով առաջացող հիմնախնդիրներին և դրանց լուծմանը, Սևանա լճի մակարդակի բարձրացման անհրաժեշտ միջոց (1903,5 մ) ապահովելու, ջրի մաքրման և կենսաբազմազանության վերականգնմանը, Սևանա լճի ավազանում էկոհամակարգի վրա վնասակար ազդեցություն ունեցող (հանքարդյունաբերություն, գյուղատնտեսություն, կոմունալ տնտեսություն) տնտեսական գործունեության բոլոր տեսակների նկատմամբ խիստ վերահսկողության սահմանմանը, լճի կենտրոնական գոտում քաղաքաշինական գործունեության սահմանված կարգի պահպանման, ավիամեծ ցամաքային տարածքների քաղաքաշինական կազմակերպման միջոցառումների իրականացմանը:

Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովը, ուսումնասիրելով նախկին ԽՍՀՄ և Հայաստանի Հանրապետության հեղինակավոր մասնագիտացված կազմակերպությունների կողմից կատարված համալիր և բազմակողմանի հետազոտությունների արդյունքները, փաստագրել է, որ իրոք Սևանա լճի պահպանման, վերականգնման, զարգացման ու օգտագործման միակ արդյունավետ ուղին լճի մակարդակի բարձրացումն է մինչև 1903,5 մ միջը, որը միանշանակ գիտականորեն հիմնավորված է և լրացուցիչ հետազոտությունների կարիք չունի:

Հանձնաժողովը գտնում է, որ Սևանի մակարդակի բարձրացումն ազգային գերխնդիր է: Լճի ջրերի մակարդակի 6 մետրով բարձրացումը մի կողմից հնարավորություն է տալիս առանց հսկայածավալ ծախսերի (ջրամբարների կառուցում, գետերի հոսքերի տեղափոխում և այլն) լճում լրացուցիչ կուտակել շուրջ 8 մլրդ խմ ջուր: Համեմատության համար նշենք, որ հանրապետության բոլոր 79 արհեստական ջրամբարներում տարեկան միջին հաշվով կուտակվում է ընդամենը 1 մլրդ խմ ջուր: Սևանում ջրի ռազմավարական պաշար ստեղծելը ազգային անվտանգության կարևորագույն խնդիրներից է՝ հաշվի առնելով արտակարգ իրավիճակներում էլեկտրաէներգիա արտադրելու, ոռոգելի երկրագործությունը ջրով ապահովելու կենսական անհրաժեշտությունը և քաղցրահամ խմելու ջուր արտահանելու մեծ հնարավորությունը:

Առոմակայան ունեցող և գլոբալ տաքացման հետևանքով ջրասակավության վտանգի ենթակա հանրապետությունը պարտավոր է ջրի ռազմավարական պաշարներ ստեղծել: Մյուս կողմից աշխարհում այսօր արդեն մարդկության առջև ծառացած ամենամեծ խնդիրներից է քաղցրահամ ջրի սակավությունը: Այս տեսակետից Սևանը իր 35 մլրդ խմ քաղցրահամ ջրի պաշարով ունի ոչ միայն ազգային, այլև տարածաշրջանային նշանակություն: Գտնվելով ծովի մակերևույթից 1903,5 մետր բարձրության վրա՝ Սևանը տարածաշրջանի ցածրադիր երկրների համար ինքնահոս խմելու ջուր մատակարարող հիմնական աղբյուրներից է:

Սևանա լճի մակարդակի բարձրացման արդյունքում ջրածածկվող և ողողվող տարածքների կազմակերպման անհրաժեշտ միջոցառումների ծավալները հստակեցնելու նպատակով հանձնաժողովը մշակել է Սևանա լճի կենտրոնական գոտու ավիամեծ ցամաքային տարածքների քաղաքաշինության կազմակերպման միջոցառումների փաթեթ, ջրածածկման և ողողման ենթակա տարածքներում ըստ փուլերի արտադրված են լճի մակարդակի բարձրացմանը զուգընթաց կատարվելիք աշխատանքների իրականացման կարևորագույն բաղադրիչները:

Մասնավորապես, դիտարկվել են ջրածածկվող հողամասերի, շենք շինությունների, ինժեներատրամապորտային ենթակառուցվածքների, հաշվառված կառույցների և հողամասերի, անտառածածկ տարածքների և այլ խնդիրների հետ կապված հարցերը և դրանց լուծման ուղիները:

Համաձայն ժամանակացույցի և հաշվարկների՝ լճի մակարդակի բարձրացումը մինչև 1903,5 մ միջը նախատեսվում է իրականացնել 23 տարում՝ յուրաքանչյուր տարի միջին հաշվով 20,1 սմ բարձրացնելու ճանապարհով, կամ ամեն տարի ջրի ծավալը լճում կավելանա 271 մլն խմ-ով:

Սևանա լճի ջրի մակարդակը մինչև 1903,5 մ բացարձակ միջը բարձրացնելու ժամանակացույցի հիմքում դրված են հետևյալ հիմնական գործոնները՝ լճի ակտիվ ջրատվությունը, Արփա-Սևան թունելով լիճ տեղափոխվող ջրի հնարավոր ծավալը, ոռոգման նպատակով լճից ջրի բացթողման հնարավոր ծավալը:

Սևանա լճի հիմնահարցերի հանձնաժողովը գտնում է, որ լճի մակարդակը մինչև 1905 մ բացարձակ միջը (ջրածածկման և ողողման) բարձրացնելու հետևանքով առաջացող հիմնախնդիրների լուծմանն ուղղված միջոցառումները պետք է նախատեսվեն և իրականացվեն Սևանա լճի մակարդակի բարձրացման ժամանակացույցին զուգահեռ կամ առաջանցիկ տեմպերով:

Հանրապետության հիմնական ջրօգտագործողների (ոռոգում, բնակչության և արդյունաբերության ջրապահովում, հիդրոէներգետիկա, բնապահպանություն) կարիքները բավարարելու և այդ ոլորտների զարգացումն ապահովելու, ինչպես նաև ջրային ոլորտում միջազգային համաձայնագրերի իրագործման խնդիրների գնահատումը ցույց է տալիս, որ հանրապետությունում առկա ջրային ռեսուրսները բավարար են դրանց լուծման համար:

Ըստ մեր կանխատեսումների՝ 2030-ական թվականներին հանրապետությունում ջրային պաշարների օգտագործումը տարեկան կկազմի 6,7-7,3 մլրդ խմ: Այսինքն, 2030 թվականին ջրային պաշարների պահանջարկը կհավասարվի հանրապետության առկա ջրային պաշարների առաջարկին: Հետագայում ջրի նոր պահանջարկի բավարարման հիմնական ուղին լինելու է բոլոր օղակներում ջրի կորուստների կրճատումը: Որպես հաշվարկային մեծություններ՝ հաշվի են առնվել բնակչության թվի աճը, ջրի կենցաղային օգտագործման նորմալ չափաբաժինները, ոռոգելի հողերի տարածքների աճը, արդյունաբերության զարգացումը, Սևանի մակարդակի բարձրացումը, հիդրոէներգետիկայի զգալի աճը, գետերի սանիտարական նվազագույն հոսքերի ապահովումը և այլն:

Այսպիսով, հանրապետության ջրօգտագործման և ջրային պաշարների վերլուծությունը մեկ անգամ ևս հաստատում է ուղիղտուր առկա կարևորագույն հիմնահարցերի առկայությունը և դրանց համալիր լուծմանն ուղղված ծրագրերի մշակման և իրականացման անհրաժեշտությունը:

Կարելի է առանց չափազանցելու նշել, որ ներկայումս ջրային պաշարների պահպանումը, լրիվ և արդյունավետ օգտագործումը դարձել են խիստ կարևոր հիմնահարցեր, որոնց հաջող լուծումից է կախված հանրապետության ողջ տնտեսության հետագա առաջընթացը:


ՀՀ ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտը առաջարկում է չորս փարով ընդհանրապես արգելել ձկան որսը Սևանա լճում

Հայաստանի Հանրապետության Գիտությունների ազգային ակադեմիայի հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտը առաջարկ է ներկայացրել ՀՀ բնապահպանության նախարարություն՝ Սևանա լճում արգելելու նաև լճածածան ձկնատեսակի որսը: Ինչպես վերջերս հրավիրված ասուլիսում նշեց ինստիտուտի տնօրեն Բարդուղ Գաբրիելյանը, տարվա կտրվածքով ուսումնասիրությունները ցույց են տվել, որ լճում ինչպես սիգ ձկնատեսակի, այնպես էլ կարասի պաշարները նախորդ տարում զգալիորեն նվազել են:

«Նվազման պատճառները երկուսն են՝ ձկնորսության մեծ ծավալը, որը կառավարության թույլատրած չափից բավական մեծ է, և ձկնատեսակի վարակվածության աճը, որը ևս խանգարում է կարասի պոպուլյացիայի խթանմանը», - ասաց նա: Բ. Գաբրիելյանի խոսքով, 2010-ին ինստիտուտն առաջարկել է թույլատրել լճում միայն խեցգետնի որս կազմակերպել:

Ձկնապաշարի նվազմանը նպաստում է նաև ձկնորսների կողմից ցանցերի կիրառումը, որը հնարավորություն է տալիս նույն տարածքից մի քանի տեսակի և ավելի մեծ քանակով ձուլ որսալու:

Բարդուղ Գաբրիելյանն ընդգծեց, որ



կարևոր հարցերից է կենսունակ մանրածուխ լիճ բաց թողնելը, ինչպես նաև ձկների բնադրավայրերի վերականգնումը, ինչն ապահովում է ձկների բնական վերարտադրությունը: Նրա տեղեկացմամբ, Սևանում երեք տարի առաջ իշխանի մանրածուխ լիճ բացթողման արդյունքները ինստիտուտը կսկսի ուսումնասիրել այս տարի: Իսկ թե որքան ժամանակ կպահանջվի

Սևանա լճում ձկների բնականոն պոպուլյացիան և պաշարները վերականգնելու համար, Բ. Գաբրիելյանը պատասխանեց, որ տարբեր ձկնատեսակների համար այդ գործընթացը տարբեր ժամանակահատվածներում է կատարվում: «Ամենաարագ աճող ձկնատեսակը սիգն է, որի պաշարները վերականգնելու համար կպահանջվի 4 տարի, իշխան ձկան համար՝ 7-8, իսկ, օ-

րինակ, Սևանի կողակը բավական դանդաղ աճող ձուլ է, որի համար անհրաժեշտ է 15-16 տարի», - ասաց նա:

ԳԱԱ Հիդրոէկոլոգիայի և ձկնաբանության ինստիտուտի ջրակենսաբանության բաժնի վարիչ Էվելինա Դուկասյանի տեղեկացմամբ, այս տարի խեցգետնի որսի թույլատրված սահմանը մինչև 250 տոննա է: «Խեցգետնի պաշարները ևս լճում զնալով նվազում են: Խեցգետնի ջրամբարների սանիտար է, որը յուրացնում է լճի հատակում մնացած օրգանական նյութերը, այնպես որ, դրա պաշարների ավելացումը նաև էկոլոգիական խնդիր է լուծում», - ավելացրեց նա:

ՈՐՊԵՄ ՎԵՐԱԶՄԱՆ: Առաջարկվում է արգելել նաև կարասի որսը: Արդեն արգելված է սիգի որսը, սակայն շուկաներում, փողոցների մայրերին այսօր կարող եք գնել ամենատարբեր չափերի սիգ և կարաս: Պետք չի բացատրել, թե ինչպես է սիգի հսկայական քանակը հայտնվում շուկաներում և փողոցներում: Դա որսագողության արդյունք է: Այստեղ մեզ մնում է հարցն ուղղել ռադիկալներին և պատմիչ մյուս մարմիններին՝ ինչու միջոցներ չեն ձեռնարկվում, չէ՞ որ վաճառվում է գողոն, արգելված, գողացված ապրանք՝ այստեղից թիտ բռնող անդամալի հետևանքներով:

Տարիների փորձը ցույց է տալիս, որ այդ մարմինների բարձր կամ աչառու և շահադիտական պահվածքը նպաստել և այսուհետ էլ նպաստելու է Սևանը կենսապաշարներից զրկելուն:

Անցյալ տարվա դեկտեմբերին Երևանում տեղի ունեցավ Վիկտոր Համբարձումյանի արձանի հանդիսավոր բացման արարողությունը:

Այս կապակցությամբ ուզում եմ ասել հետևյալը: Դեռևս 1939 թ. Նայաստանում խորհրդային կարգերի հաստատման քսանամյակի նախօրյակին Երևանի կոմերիտական կազմակերպությունների և ուսանողության նախաձեռնությամբ Պեպական համալսարանի դիմացի ամառյի տարածքում հիմնադրվեց նոր զբոսայգի: Այդ զբոսայգին կոչվեց 1920 թ. մայիսին մատուցած ծառայությունների ձեռքով չարանեցողներն սպանված երիտասարդ հեղափոխական Ղուկաս Ղուկասյանի անունով:

1940 թ. այդ զբոսայգում տեղի ունեցավ Ղուկաս Ղուկասյանի արձանի բացումը: Նկարի ունենալով, որ Ղուկաս Ղուկասյանը սիրում էր զբաղվել աստղագիտությամբ, նրա անունը կրող զբոսայգում կառուցվեց աստղադիտարան:

Տասնամյակներ շարունակ Ղ. Ղուկասյանի անվան զբոսայգին մնում էր որպես ուսանողության սիրելի վայրը: 1989 թ. 1990 թթ. մի խումբ բարբարոսներ երկրորդ անգամ սպանեցին Ղ. Ղուկասյանին՝ այս անգամ պայթեցնելով նրա արձանը: Ղ. Ղուկասյանի անունը հանվեց նաև Երևանի Պիոներների պարտի վրայից:

Երկու փաստաթուղթ Վիկտոր Համբարձումյանի մասին

Հանգամանքների բերումով տարիներ առաջ ես ներկա եմ եղել Ղ. Ղուկասյանի եղբոր՝ Կարո Ղուկասյանի հանդիպմանը Վիկտոր Համբարձումյանի հետ և լսել նրա ջերմ խոսքը գոհված հեղափոխական երիտասարդի մասին:

Եվ այժմ, պարտության ու ժամանակի քնահաճույքով, Վիկտոր Համբարձումյանի արձանը կանգնեցվել է Ղուկաս Ղուկասյանի արձանի տեղում:

Մինչդեռ, իմ խորին համոզմամբ, ճիշդ կլիներ, եթե հայ ժողովրդի փառքը բազմապարկող հանճարեղ գիտնականի արձանը դրվեր Նայաստանի գիտությունների ազգային ակադեմիայի նախագահության շենքի առջև՝ բարձունքի վրա, այն ակադեմիայի, որի կայացման գործում նա ունեցել է մեծագույն ծառայություն:

Ես այս հարցին այսպիսի ուշադրություն դարձրեցի, որպեսզի մեկ անգամ ևս փաստեմ, որ հարկավոր է վերջ տալ 1990-ական թվականներից հիշականների կողմից հրահրված սերունդներին միմյանց հակադրելու, թշնամացնելու շարունակվող քաղաքականությունը և մրաձեղ երիտասարդ սերունդին իրենց հայրերի աշխատանքի արդյունքների, նրանց ապրած ժամանակի և սրբեղծ ապարմության նկատմամբ հարգանքի ու երախտագիտության դաստիարակելու մասին:

Սա խիթիայոց:

Այժմ ուզում եմ ընթերցողի ուշադրությանը ներկայացնել Վիկտոր Համբարձումյանի կյանքին վերաբերող երկու փաստաթուղթ, որոնց մասին լայն հանրությունը քիչ է տեղյակ:

1921 թ. հունիսի 9-ին «Կարմիր աստղ» թերթը հրապարակեց «Փոքրիկ աստղագետը» վերնագրով ուշագրավ հոդվածը: Թերթը հայտնում էր, որ հունիսի 8-ին Թիֆլիսի կոնսերվատորիայի դասիկոն կայացել է «մի փոքրիկ գիտնականի երկրորդ դասախոսությունը» և շարունակում. «Տասներկու տարեկան աստղագետ Վիկտոր Համբարձումյանը փայլուն կերպով կարողացավ «Աշխարհի սկզբնավորությունը» դասախոսությունը»:

Նույն դասիկոնում նա մի քանի ժամանակ առաջ նույն քան հաջողությամբ կարողացավ «Բնակչությունը Մարսի վրա»:

Դասախոսությունը լսելու եկած էր բազմամարդ հասարակություն, գլխավորապես իրեն հասակակից երեխաներ: Դասիկոն ոգևորված ընդունում և ոգևորված ճանապարհ էր դնում փոքրիկ աստղագետին, ամբողջովին ծաղիկների տարավով ծածկելով բեմը:

Արտասովոր լրջություն, խոր և բազմակողմանի հետազոտություն ցուցադրեց փոքրիկ աստղագետը:

Դասախոսությունից հետո դասիկոնում ներկա եղող մասնագետները սկսեցին բազմակողմանի և բազմաթիվ հարցեր տալ փոքրիկ գեկուցանողին, որոնց նա լիովին, բավարար պատասխանում էր:

Մասնագետները հիացմունքով շնորհավորեցին և խրախուսեցին փոքրիկ գիտնականին:

«Դա, անշուշտ, փնտելեկինդ է և կարող է առանձին խնամքի, մասնավոր լավ սնունդի և կյանքի պայմանների»:

Միայն լավ խնամքը և իրական ու ռեալ խրախուսանքը հնարավորություն կտան փոքրիկ հասակում գիտության վերին գագաթնակետին, դեպի որը հասնելու ճանապարհի վրա նա արդեն վաղուց գտնվում է, ինչ փորձական հասակից պարավելով աստղաբաշխությանը:

Երեխան պարկանում է հասարակության և հասարակությունն էլ պետք է հոգ տանի հանճարեղ երեխայի ֆիզիկական և մտավոր զարգացման մասին»:

Այս հոդվածը գրվեց Ալեքսանդր Մյասնիկյանի ուշադրությունը: Երբ նա աշխատանքի տեղափոխվեց Թիֆլիս, ավելի մոտիկից հետաքրքրվեց Վիկտորի ճակատագրով: Մյասնիկյանի անմիջական նախաձեռնությամբ էլ տասնվեցամյա Վիկտորը 1924 թ. ընդունվեց Լենինգրադի մանկավարժական ինստիտուտի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետը: Նույն թվականի հոկտեմբերի 14-ին Ալ. Մյասնիկյանը ստացավ հետևյալ նամակը.

«Հարգելի ընկեր Ա. Մյասնիկյան

Կարո՞ղ էր արդյոք որևէ այլ հանգամանք հարկադրել այս գրությանը դիմել ձեզ, եթե ոչ այն համոզմունքը, որ հասարակական ձեր դիրքն ինքնին երաշխավորում է, որ ձեզ դիմողներին դուք չեք կարող լքել: Երբեք չեմ կարող լքել: Ում շատ է փրկված, նրանից շատ էլ պահանջվում է:

Երբ տարի է, որ մեր կյանքի պարամական հանգամանքները ձեզ բերել են մեր ազգային-հասարակական բարձունքին, որպեսզի ազգայրեն կարող եք մեկնել ձեր հայացքները դեպի մեր կյանքի բոլոր կողմերը:

Չեմ սխալվի, եթե ասեմ, որ այդ կարճ ժամանակամիջո-



Վ. Համբարձումյանի ծնողները՝ Համազասպ և Հռիփսիմե Համբարձումյանները:

ցում ձեզ դիմել են շատ շարերը, կամ ավելի ճիշդն ասած՝ համարյա բոլոր գրական մեր գործիչները: Բայց անձնապես ինձ մինչև այժմ առիթ չի ներկայացել այդ անկու: Խորհրդային իշխանության հաստատվելը շարերին հնարավորություն տվեց օգտվել դեպքերից և բարելավել իր նյութական բարոյական վիճակը:

Ինչո՞ւ ես ևս չեմ արել այդ քայլը: Չէ՞ որ ես էլ իմ համեստ տեղն ունեմ մեր գրականության մեջ:

Չէ՞ որ 1904 թ. սկսած երկու տասնյակ տարիներ շարունակ ես ևս նվիրել եմ իմ համեստ ուժերը մեր գրական ասպարեզին:

Ուրիշ, հավաքագներ, ընկեր, որ այսօր էլ ես չեմ դիմել ձեզ, եթե ջիներ մի չափազանց կարևոր և, համոզված եմ, ձեր սրտին մոտ հանգամանք:

Խնդիրը վերաբերում է իմ որդուն՝ ձեզ շատ լավ հայտնի, 15-16 տարեկան աստղագետ-մաթեմատիկոս Վիկտոր Համբարձումյանին:

Անչափ շնորհակալ եմ. միշտ առանձին խնամքով և արտակարգ ուշադրությամբ եք դուք վերաբերվել «փոքրիկ աստղագետին»:

Ներկայումս Վիկտորը գտնվում է Լենինգրադում: Նա ընդունված է Ներցենի անվան ինստիտուտի ֆիզիկա-մաթեմատիկական բաժնում: Մնացյալը դուք կարող եք իմանալ նրա նամակներից, որոնցից երկուսը սրա հետ միասին ներկայացնում եմ ձեզ:

Այժմ Վիկտորը նյութական մեծ կարիքի մեջ է: Լենինգրադում արդեն սկսված են ցրվերը, իսկ փոքրիկ Վիկտորը, շնորհիվ նյութական կարիքի, գրկված է բոլոր հարմարություններից: Նա չունի տար հագուստ, չունի վերաբեր, չունի վառելիք և այլն:

Միանգամայն համոզված լինելով, որ դուք ամենայն նրբությամբ և հեռադեմ կերպով գիտեք գնահատել գիտական ճշմարիտ որոնումներն ու աշխատանքը և որ, մասնավորապես, համակրանքով եք վերաբերվում դեպի Վիկտորի գիտական արտակարգ ձգտումները, վստահանում եմ ընկերաբար դիմել ձեզ և խնդրել, եթե միայն հնարավոր է, տալ Ձևակրային միջոցներից, իբրև օգնություն, միանվագ Վիկտոր Համբարձումյանին մի որոշ գումար, որով նա կարողանա հոգալ իր ընթացիկ կարիքները:

Կարիք եմ գտնում շեշտելու և այն, որ ծայրահեղ դեպքում Վիկտորը միանգամայն կարող է լինել պիտանի թղթակից ձեր ղեկավարությանը հանձնված «Заря Востока» թերթին:

Ուստի՝ եթե ցանկանաք, այդ գործը նա կարող է կատարել, ինչպես հարկն է:

Վիկտորի հասցեն՝ Ленинград, ул. Льва Толстого, д. 3, кв. 16.

Իմ հասցեն՝ Бебутовская 42, Թիֆլիսում:

Սպասելով ձեր պատասխանին՝ ձեզ միշտ հարգող Համազասպ Համբարձումյան»:

Այս նամակի վրա Ալ. Մյասնիկյանը մակագրել է. «ЗакЛДК. На президент. Писмо потом вернуть мне»:


Ալ. Մյասնիկյանի առաջարկությամբ Անդրեյ Երազիցի կենտրոնացվում է ընդունում է հապուկ որոշում՝ Վիկտոր Համբարձումյանին կրթաթոշակ նշանակելու մասին:

Կարճ ժամանակ անց Ալ. Մյասնիկյանի աջակցությամբ Վիկտոր Համբարձումյանը տեղափոխվեց Լենինգրադի համալսարանի ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետ...

Վրացի ՊԵՏՐՈՍՅԱՆ
Պարմենակ գիտությունների դոկտոր

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Էներգետիկայի զարգացման հեռանկարները

Ղարաբաղի տնտեսության ամենախոշոր ճյուղը էներգետիկան է: Այսօր արտադրվում է հանրապետության անհրաժեշտ էլեկտրական էներգիայի 40 տոկոսը:



Լեռնային Ղարաբաղի տարածքում կար խորհրդային իշխանության տարիներին կառուցված չորս հիդրոէլեկտրակայան: Դրանցից համեմատաբար հինը Սյունիկում է, որը գործում էր 1930-ական թվականներից: Այն ուներ փոքր հզորություն և երկար ժամանակ բավարարում էր միայն Սյունիկի տեղի պահանջները: 1940-ական թվականներին կառուցվել է մի փոքր հիդրոէլեկտրակայան Մարտակերտի շրջանի Մարտակերտ քաղաքի մոտ: Դրանք այժմ չեն գործում: Համեմատաբար հզորը Սարսանգի հեկ-ն է, որը կառուցվել է Մարտակերտի շրջանում Թարթառ գետի վրա: Հզորությունը կազմում է 50 հազ. կվտ: 1988-1993 թթ. Ադրբեջանի կողմից սանձազերծված պարբերական հետևանքով Սարսանգի հեկ-ը նույնպես չէր գործում: Այժմ այն լրիվ հզորությամբ վերագործարկված է: 1940 թ. ԼՂՀ-ում արտադրվել է 1.51 մլն կվտ էլեկտրաէներգիա, իսկ 1988 թ.՝ 57.8 մլն կվտ:

Տոմի գյուղի մոտ 1950-ական թվականներին շահագործվել է Տոմի հիդրոէլեկտրակայանը, մոտ 50 կվտ հզորությամբ: Նրանից ոչ հեռու աշխարհ է նաև գյուղի ջրաղացը: Այն անվանվել է ջրկեցի ջրաղաց: Տոմի հիդրոէլեկտրակայանը աշխարհ է մի քանի տարի և արժանացել նախկինների ճակատագրին:

1960-1970 թթ. գործարկվեցին նաև 110 կվտ լարման էլեկտրահզորության գծերը, որոնք Նայաստանի էներգահամակարգը կապում էին Վրաստանի և Ադրբեջանի էներգահամակարգերի հետ: Դրանցից էին 110 կվտ լարման «Լավար», «Շի-նուհայ», էլեկտրահզորության գծերը: Վերջինս հայկական էներգահամակարգը կապում էր Լեռնային Ղարաբաղի Նախապետության էներգահամակարգի հետ: 1993 թ. Թարթառի հեկ-ը վերականգնելուց հետո կայանը «Շի-նուհայ» էլեկտրահզորության գծի միջոցով սկսեց գույքահեռ աշխարհել հայկական էներգահամակարգի հետ:

1999 թվականին էներգետիկայի բնագավառում գործում էր հայաստանյան մեխանիզմը: Այսինքն, յուրաքանչյուր շրջան ուներ առանձին բաշխիչ համակարգ: Ղարաբաղում գոյություն ուներ չորս բաշխիչ ցանց: Հանրապետությունը նախկինում էլեկտրական էներգիայի մեծ մասը ստանում էր Ադրբեջանից: Պարբերաբար հեղուկ էլեկտրաէներգիա քայքայված էր: Այն վերականգնվեց այն ամենով, ինչ այդ պահին հնարավոր էր: Բաշխիչ ցանցերում կորուստները կազմում էին 40-45 տոկոս: Բնականոն գործող միակ ցանցը Սյունիկում էր, որը մեկուսացված էր մյուսներից:

Այդ իսկ պարճառով չորս շրջանների ցանցերը միացվեցին մեկ համակարգի մեջ: Յուրաքանչյուր տարի Նայաստանից Ղարաբաղը ստանում է մոտ 100 մլն կվտ էլեկտրաէներգիա: Կորուստների մակարդակը 40-ից նվազել է 22 տոկոսի:

Նախնական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ Լեռնային Ղարաբաղի հիդրոէներգետիկական պաշարները զգալի են: Ըստ այդ ուսումնասիրությունների՝ առաջարկվում է կառուցել 14 հիդրոէլեկտրակայան, 39.5 մվտ գումարային հզորությամբ և տարեկան 202.9 միլիոն կվտ էլեկտրաէներգիայի արտադրությամբ:

Թարթառ գետի ավազանում կարելի է կառուցել երեք հիդրոէլեկտրակայան:

Իշխանագետի ջրավազանը գտնվում է ԼՂՀ հարավային մասում: Ննարավոր է օգտագործել մոտ 460 մետրի էջը, սկսած 1010 մ մինչև 548 մետրը: Այս գետի վրա կարելի է կառուցել 4 հիդրոէլեկտրակայան:


Կարկառ գետի ջրավազանում, որը գտնվում է ԼՂՀ կենտրոնական մասում՝ կարելի է կառուցել 5 փեկ: Ննարավոր է օգտագործել մոտ 600 մետրի էջը, սկսած 1080 մ մինչև 472 մետրը:

Խաչինգետի ավազանում, որը գտնվում է ԼՂՀ կենտրոնական մասում, կարելի է կառուցել մեկ փեկ: Ննարավոր է օգտագործել մոտ 120 մետրի էջը, սկսած 836 մ մինչև 720 մետրը:

Վարանդա գետի ավազանում, որը գտնվում է ԼՂՀ հարավային մասում, կարելի է կառուցել մեկ փեկ: Ննարավոր է օգտագործել մոտ 140 մետրի էջը, սկսած 795 մ մինչև 657 մետրը:

Ղարաբաղի կլիմայական պայմանները նպաստավոր են, որպեսզի լայնորեն օգտագործվեն փոքր և միջին հզորության զգալիորոշիկային կայանները: Ննարավոր է համակցված սխեմայով արտադրել ինչպես էլեկտրական, այնպես էլ ջերմային էներգիա, խնայել վառելիքաէներգետիկ ռեսուրսներ: Ներկայումս արտադրանքային երկրներում արտադրվում է 30 կվտ և ավելի հզորություն ունեցող այդպիսի սարքավորումների լայն տեսականի: Նրանց շահագործումը հեշտ է, բարդությունների հետ կապված չէ:

Սյունիկի ՊԵՏՐՈՍՅԱՆ
Տիկնիկական գիտությունների թեկնածու



ՆՇԱՆԱՎՈՐ ՀԱՅ ՎԱՃԱՌԱԿԱՆՆ ՈՒ ԴԻՎԱՆԱԳԵՏԸ. ԽՈՋԱ ԻՍՐԱՅԵԼ ՍԱՐՋԱՂ

տարի անց՝ 1698 թ., կայսրը 16. 000 ռուբլու արտոնագիր է շնորհում անգլիացիներին և վարձակալության իրավունք տալիս Կալկաթայի երեք գյուղերի վրա:

Իբրև միջնորդ՝ Խոջա Իսրայել Սարհադին տեսնում ենք մահ 1713 թ.: Այս անգամ անգլիացիները ցանկանում էին պատգամավորություն ուղարկել Դելիի Ֆարքուք Սիյար կայսեր մոտ՝ որոշ արտոնություններ ստանալու համար: Նրանց կրկին աջակցում է Խոջա Իսրայելը: Վերջինիս էլ մեծապես օգնում է կայսեր դատեր մոտ աշխատող հայազգի Խոջա Մանուրը, ով իր անձնական կապերի շնորհիվ ձեռք է բերում կայսեր պաշտոնական թույլտվությունը, որով կարգադրվում է տեղի բոլոր իշխաններին և կառավարիչներին՝ նպաստավոր պայմաններ ստեղծել անգլիացիների պատգամավորության համար:

Այս նպատակով 1714 թ. Կալկաթայում անգլիացիները ժողով են գումարում՝ կայսեր մոտ գնացող պատգամավորների կազմը ճշտելու համար: Զննարկումների արդյունքում երեք հոգուց բաղկացած պատգամավորական խմբի երկրորդ անձը հայազգի Խոջա Իսրայելն էր: Նրա ընտրության գործում անգլիացիները հաշվի էին առել մի շարք հանգամանքներ. մալի՝ կայսեր հետ հայ վաճառականի մտերմիկ հարաբերությունը, երկրորդ՝ նա վարժ տիրապետում էր պարսկերեն լեզվին և շահեկան առևտրի

հանդեպ սուր հոտատություն ուներ, և երրորդ՝ անգլիացիներն արդեն իսկ օգտվել էին նրա ծառայություններից և գիտեին պահի տակ նրա ճիշտ կողմնորոշվելու մեծ ձիրքի մասին: Եթե Խոջա Իսրայելը հաջողության հասներ Դելիում, ապա անգլիացիները պարտավորվում էին որոշակի արտոնություններ և իրավունքներ տալ մահ 1715 թ. Խոջա Իսրայել Դելի է գնում և անգլիացիների համար կարողանում ձեռք բերել «Մեծ Ֆարմանը», որով Հնդկաստանի մեջ փաստորեն հիմնադրվեց բրիտանական կառավարությունը:

Բենգալիայի նահանգի պատմության հետազոտողները շատ բարձր են գնահատել հայ վաճառականի դերակատարությունը վերագրյալ բանակցություններում, քանզի «Մեծ Ֆարմանից» հետո Կալկաթայի բնակիչներն առավել արտոնություններ, իրավունքներ ստացան, և տարեցտարի քաղաքը բարգավաճեց և զարգացավ: Նկատի ունենալով այս ամենը և Խոջա Իսրայելի գործունեությունը՝ 1895 թ. ակնամարտ պատմաբան Ս. Ուիլսոնը Կալկաթային մկրված իր ուսումնասիրություններից մեկում գրում է. «Եթե ձոր Չարմորը Կալկաթայի հիմնադիրն է, ապա նրա առանձնաշնորհումների և նախկին երաշխավորությունների հեղինակը՝ հայազգի մեծանուն վաճառական Խոջա Իսրայել Սարհադը»:

Ճակար սրտի, այլևս տեղեկություններ

չկան Խոջա Իսրայելի հետագա գործունեության և կյանքի վերջին տարիների մասին: Ըստ հնդկահայ գաղութի խորագրին հետազոտող Մեսրոպ Մեթի՝ նրա գերեզմանը չկա Կալկաթայի, Չինաութահի, Մեյդաբադի, Հուդիի տարածաշրջանի և Դաքքայի հայկական գերեզմանոցներում, գտցե մահ իր կյանքի վերջին օրերն ապրել է ծննդավայր Նոր Ջաղայում: Մադրասի հայկական գերեզմանոցում է քաղված Սարհադ անունով մի հայ, ով իր մահկանացուն է կնքել 1701 թ.: Մեսրոպ Մեթը կարծիք է հայտնում, որ գտցե այս Սարհադը Խոջա Իսրայել Սարհադի հայրն է եղել: Դժբախտաբար, այսօր մեծանուն հայագետի կարծիքն ապացուցող կամ հերքող փաստեր չունենք:

Անկախ ամեն ինչից, հայաբնակության զգացում ես ապրում Խոջա Իսրայելի և նրա մահ հայազգի երևելի մեր մյուս վաճառականների մասին կարդալիս, քանզի նրանք ոչ միայն բարձր են պահել հայ մարդու անունն օտար հողում, այլ նաև նպաստել են իրենց հայրենակիցների բարձր ու խաղաղ կյանքին: Միավաճ չենք լինի եթե ասենք, որ հենց այսպիսի շնորհալի և հայրենասեր վաճառականների շնորհիվ ծաղկեց ու բարգավաճեց հնդկահայ գաղութը, ուր հայ մարդն ազատորեն և լիարժեքորեն կարողացավ ապրել ազգային, եկեղեցական և մշակութային կյանքով:

Տիգրան սրկ. ԲԱՆՈՒՄՅԱՆ

ԳՐԹԻ ՇՆՈՐՀԱՆԴԵՍ

«Դեպի խորքը լեռան»

Շնամարիտ արվեստագետը մահ է, ով ինչքան հեռանում է իր ժամանակներից, այնքան շոքալ լույս է պարզանում սերունդների:

Հայ իրականության մեջ ահա այդպիսի մեծ արվեստագետ է բանաստեղծուհի Սիլվա Կապուտիկյանը, որի խոսքի հմայքը շարունակում է գերել նորանոր սերունդների:

Բանաստեղծուհու ծննդյան 90-րդ տարեդարձի կապակցությամբ ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտի «Մեսրոպ Արք. Աշենան» մատենաշարով օրերս հրապարակվեց «Դեպի խորքը լեռան» հոդվածների ժողովածուն: Այն կազմել են բանասիրական գիտությունների թեկնածուներ դոցենտ Դավիթ Գյուլզարյանը և Գայանե Հակոբյանը: Ժողովածուում գետնորդ Սիլվա Կապուտիկյանի ստեղծագործությունները, գրական-հասարակական գործունեությունը բնութագրող հոդվածներ, գրախոսականներ, ինչպես նաև տարբեր տարիներին բանաստեղծուհուն ուղղված մի շարք նամակներ և ուղերձներ:

Սույն ժողովածուն հրապարակումների առաջին համահավաք փորձն է և կարող է լավ հիմք հանդիսանալ կապուտիկյանագիտության համար:

Ժողովածուն բաղկացած է երեք բաժիններից:

Առաջին բաժինն ընդգրկում է հայ և օտարազգի գրողների, գրականագետների, արվեստագետների տասնամյակների ընթացքում հեղինակած այն հոդվածներն ու գրախոսականները, որոնք լավագույնս բնութագրում են Սիլվա Կապուտիկյան բանաստեղծին, արձակագրին, հրապարակախոսին և ազգային-հասարակական գործչին:

Այդ ցանկում ընթերցողին հանրահայտ ու բանկ անուններ են Պարույր Սևակ, Վահագն Դավթյան, Լևոն Հախվերդյան, Մարտիրոս Սարյան, Նաիրի Ջալալյան, Համո Սահյան, Էդուարդաս Մեծելայտիս, Էդվարդ Ջրբաշյան, Վարդգես Պետրոսյան, Շահան Շահնուր, Մո-



րիս Փոցխիշվիլի, Հրաչյա Հովհաննիսյան, Ստեփան Ալաջաջյան, Միխայիլ Դուդին և ուրիշներ:

Այդ և այլ անունների մեջ, թերևս, խոսքը տանք ռուս անվանի բանաստեղծ Միխայիլ Դուդինին, որը դեռևս 1981 թվականին այսպիսի բնութագրում է տվել. «Նրա բանաստեղծությունները տաճարապետի են ու բաց: Նրա մեջ մայրական սկիզբ կա, սեր կա դեպի ամենայն շունչ-արարած: Հայ ժողովրդի կյանքի իրողությունը նրա պոեզիայի ուժով դուրս է

գալիս Հայաստանի լեռնային հորիզոնից, միանում մարդկային միասնության ընդհանուր տոնին: Սիլվա Կապուտիկյանի ճանապարհը լեռան գագաթ տանող ճանապարհ է, որ նա քայլ առ քայլ բացել է իր ջանքերով»:

Իսկ վրաց բանաստեղծ Մորիս Փոցխիշվիլին հանձնել հայ բանաստեղծուհու հետևյալն է ընդգծում. «Բանաստեղծին, իսկական բանաստեղծին Աստուծո հետ խոսելու իրավունք է շնորհված, որ նա դառնա ազգի պայծառատես մարգարեն և առաջնորդի նրան դեպի լուսավոր ապագա, բանա այլոց հետ բարեկամության դուռը»:

Գրքի «Նամակներ, ուղերձներ» բաժնում գետնորդ են Հ. Բարսեղ Ֆերիաթեանի, Նիկա Մորոզովայի (Օդեսա), Կարլեն Դանիելյանի, Սերո Խանգադյանի, Հովհաննես Պարսկունու բանաստեղծուհուն հասցեագրված հրապարակումները: «Հուշեր» խորագրի ներքո տպագրվել են Աշխեն Աբաջյանի «Այս օձակեր տղաները» և Բեգլարյանի «Հայ պոեզիայի թագուհին՝ Նարաբաղում» հուշակատարումները:

Պետք է նշել, որ սույն ժողովածուում ընդգրկված որոշ նյութեր վերցված են բանաստեղծուհու անձնական արխիվից և տպագրվում են առաջին անգամ:

Արմեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Պատմաբան, լրագրող,
հրապարակախոս

Հոլանդիայում հրապարակվել է Էնթնի Հոլսլանի «Արարարի քարերին» աշխատությունը

Հոլանդական «ASPEKT» հրապարակչությունը լույս է բնծայել Էնթնի Հոլսլանի «Արարարի քարերին» աշխատությունը: Վեցհատուկյալում հեղինակը ներկայացնում է Հայոց ցեղասպանության պարագայերը և հեղինակները՝ հենվելով պարմական փաստաթղթերի, ակնարկների վկայությունների, հարցազրույցների և զանազան պարմությունների վրա: Աշխատությունում պարմվում է հայ մեծ նկարիչ Արշիլ Գորկու կյանքի և գործունեության, հայերի ինքնության, հայ սփյուռքի կազմավորման և Հայոց ցեղասպանության մասին: Թուրքիան միայնում է հայերի ցեղասպանության պարմական փաստը: Այն փարիների թուրքական պարմության գործողությունները մարմնավորում են որպես «պոլիտիկական»՝ հայերի անվտանգության նպատակով: Հայերի ցեղասպանությունն ընդունելու անհրաժեշտության մասին խոսում են թուրք մարմավորականության միայն առանձին ներկայացուցիչներ, որոնց թվում են պարմաբան Թաներ Աբաթը և Նորելյան մրցանակակիր Օրհան Փամուրը:

Բանաստեղծ Գրիգոր Մազլումյանը ստացել է Ռուսաստանի գրողների միության «Կայսերական մշակույթ» հեղինակավոր մրցանակը

Անցած փարին նշանակալի էր Գրիգոր Մազլումյանի՝ ամբողջ երկրում հայրենի Ազգային մշակույթների Լազարյան կենտրոնի հիմնադրի համար: Մեր հայրենակցի ստեղծագործական կենսագրության մեջ հիշարժան էին միանգամից մի քանի իրադարձություն: Գլխավոր ձեռքբերումներն, անշուշտ, ստեղծագործական բնույթի են.



սկզբում մայրաքաղաքի խոշոր հրապարակչությունում տպագրվեց նրա բանաստեղծությունների փառանքալի ժողովածուն, այնուհետև կրկին Մոսկվայում, Գրողների կենտրոնական փարն, փրդի ունեցավ գրական-գեղարվեստական մեծ երեկո՝ նրա նոր գրքի շնորհանդեսի առիթով: Ընթացիկ փարին նույնպես հաջող է լինելու, այն հորելյանական է: Բանաստեղծ Մազլումյանի համար, զարմանք պարմաստվում է նշել 70-ամյակը: Առաջին հաճելի նվերը հորելյանի նախաշնորհն է ստացավ վերջերս, դառնալով Ռուսաստանի գրողների միության «Կայսերական մշակույթ» հեղինակավոր մրցանակի դափնեկիր: Այս մրցանակի դափնեկիրներ են լեզնդար անձնավորություններ, մեծ անուններ, հանրահայտ կինոռեժիսոր Նիկիտա Միխալկովը, անվանի նկարիչ Էլյա Գլազունովը և շար ուրիշներ:

«Դեռևս մի քանի փարի առաջ երազել անգամ չի կարող, թե ինձ բախտ կվիճակվի հայրենիկ նման աստղային ընկերակցությունում, խոստովանում է Գրիգոր Մազլումյանը: -Նրանք այն կոհորայի մարդիկ են, որն անդադրում, ամենուր և միշտ փառավորում է հայրենի երկիրը, հավատարմորեն ծառայում Հայրենիքի շահերին»:

«Կայսերական մշակույթ» նախագծի հիմքում դրված է վառ արվեստագետ զադաիրը, հոգեպես համախմբել ազգը, ուրույն էրեկի մշակույթները և ստեղծագործ լավագույն ուժերը փարածաշրջաններում: Այս առումով Ռուսաստանի գրողների միության վարչության բարձր գնահատականին է արժանացել իր փեսակի մեջ եղակի հասարակության՝ Ազգային մշակույթների Լազարյան կենտրոնի բազմամյա փորձը:


Հայեր՝ մոռացված ցեղասպանություն

Խոսե Անտոնիո Գուդիարան: Դեռ 1980-ական թվականներից այս անունը քաջ հայտնի է հայ հասարակությանը:

1980 թվականի դեկտեմբերին Խոսե Անտոնիո Գուդիարանը վիրավորվեց Մարդիգում հայկական ահաբեկչական մի խմբի ռումբի պայթյունից: Դրոված լրագրողական մեծ հետաքրքրությամբ և մասամբ ստոկհոլմյան ախտանշանով, Գուդիարանը ջանք չխնայեց ճանաչելու այդ հակամարտության արմատները և հանդիպեց Լիբանանում այդ գործողության պատասխանատու ահաբեկիչների հետ, ինչից հետո հրապարակեց «Ռումբը» խորագրով մի գիրք, որտեղ պատմում է իր արտասովոր հանդիպումը նրանց հետ և բացահայտում հայկական ահաբեկչության պատճառները:

Գիրքը սկզբունքային «ոչ» էր բռնությանն ու մահին և գովեց կյանքին:

27 տարի անց նա այցելեց արդեն անկախ Հայաստան և հանդիպեց ԱՍԱԼ-ի նախկին անդամների հետ, որոնք վայր էին դրել զենքերը և լծվել խաղաղ



կյանքին: Նա ծանոթացավ հայ ժողովրդի ողբերգության հետ, որ ապրեց 15 թ.-ին թուրքերի ձեռքից 20-րդ դարի առաջին ցեղասպանությունը: Մի ժողովուրդ, որ դեռ պայքարում է, որ ճանաչվեն իր իրավունքները, ինչպես հիշեցնում է «Հայեր՝ մոռացված ցեղասպանություն» իր նոր գիրքը («Armenios, El genocidio olvidado» 4 Espasa, 2008 թ.), 20-րդ դարի առաջին ցեղասպանության մասին, երբ Թուրքիան ոչնչացրեց մեկ ու կես միլիոն հայ և որը Անկարայի ներկա կառավարությունը շարունակում է ժխտել, վիճարկելով նույնիսկ ցեղասպանության լինելու փաստը:

Այս երկրորդ գիրքը հայերի մասին ծնվեց Բարսեղունի մի

խումբ հայերի հետ շփումից, Իսպանիայի հայ համայնքին հանդիպելուց հետո: Այդ մտահղացումը ստիպեց հեղինակին ուսումնասիրություններ կատարել և հայտնաբերել իր համար անսպասելի տեղեկություններ հայերի վերաբերյալ Իսպանիայում, հետաքրքրվել իր հայ ծանոթների և այլոց պատմություններով, որոնք բոլորն էլ ցեղասպանության զավակներ էին կամ թոռներ: Հնարավորություններ կար գիրք գրել մարդկային և պատմական հետաքրքրությամբ, օգնելու հայկական հարցին և ըստ իրեն «ես ոգևորվեցի այն գրելու հնարավորինս լավագույն տեղում Հայաստանում»:

Իրավամբ Խոսե Անտոնիո

Գուդիարանը հայ ժողովրդի իսկական բարեկամն է, մտահոգված և ապրող նրա անցյալով, ներկայով և ապագայով: Դրա վառ ապացույցն է իրեն իսկ տողերը, գրված արգենտինահայերի «ian» կայքին:

«...Երևանում սկսեցի գրել այն ինչ այսօր գիրք է, որի մեջ դրել եմ բոլոր հույսերը, որ կնպաստի տարածելու Հայկական հարցը, որ այն կլինի ևս մի ավագահատիկ, որը կգումարվի մեր ջանքերին, որպեսզի, չնայած ուշ՝ աշխարհը ճանաչի պատմական անարդարությունը կատարված հայերի հետ: Ան է իմ՝ ինչպես և գրքի նպատակը»:

Հակոբ ՄԻՍՈՆՅԱՆ

ԿԵՏԱԲՐԲՐԱՍԵՐՆԵՐԻ ԿԱՄԱՐ

Աշխարհի ամենահին և ամենախորը երկաթուղային թունելը գտնվում է ճապոնիայի Հոկկայդո կղզում, որով անցնում են արագընթաց գնացքներ: Թունելի երկարությունը 53,85 կմ է: Տեղ-տեղ այն ծովի մակերևույթից ցածր է 240 մետրով:

Հակահրդեհային նյութերը, որոնցով սովորաբար ներծծում են շինանյութերը, կտորի ծածկոցները, վարագույրները և բնակարանային ու մեքենաների այլ առարկաներ, հրդեհի ժամանակ իրականում դանդաղեցնում են նրանց բռնկումը:

Հակահրդեհային այս նյութերը, որոնք սովորաբար բրոմ պարունակող արհեստական միացություններ են, անվնաս են առողջության և շրջապատի համար:

Իտալացի գյուղատնտեսները գտել են, որ եթե պոմիդորը ջրեն 9 մաս ջրին ավելացնելով 1 մաս ծովային աղի ջուր, ապա պոմիդորն իր մեջ կունենա ավելի շատ հակաօքսիդներ: Բացի այդ՝ լավանում է նաև պտղի համը:

Շվեդացի քիմիկոս Մաթե Նիլսոնը մշակել է հակահրդեհային բաղադրություն բնական միջոցներից: Մանրամասները պահվում են խիստ գաղտնի: Սակայն հայտնի է, որ բաղադրության մեջ մտնում են այնպիսի տարրեր, որոնք առկա են կիտրոնի, հացահատիկի ալյուրի և խաղողի հյութի մեջ:



Ճապոնական Օսակա քաղաքի համալսարանի պրոֆեսոր Հիրոսի Իսիգուրոն, որը համալսարանին կից բանական ռոբոտների լաբորատորիայի տնօրենն է, ստեղծել է ճիշտ իր նմանակ հեռակառավարվող մի ռոբոտ: Պրոֆեսորի կրկնօրինակը կարող է կարգադրվել ղախախտություն կրկնելով պրոֆեսորի շարժումներն ու դեմքի արտահայտությունները: Ռոբոտը կառավարվում է ինտերնետով՝ անգամ գործողման մեջ գտնվելիս:

«Քայլող» ծառ

Բենգալյան ֆիկուսը բոլոր անվանումները (Ficus bengalensis) հին սանսկրիտերենով միանգամայն ճշգրիտ նկարագրում է այս անսովոր ծառի այս կամ այն հատկանիշը: Նրա անվանումներից մեկն է՝ «ներքև աճող» (vata)՝ իր օղային արմատների շնորհիվ, որոնք վերևից ձգվում են մինչև ներքև: Մեկ այլ անվանումն է՝ «բազմատուղ» (bahupada)՝ իր մեկից ավելի բուն ունենալու և մեծ տարածություն գրավելու հատկանիշի շնորհիվ:

Սկզբում ծառի սերմը աճում է որպես մակաբույժ՝ սնվելով այլ ծառերի հյութով: Այնուհետև արձակում է բազմաթիվ սեփական օղային արմատներ, որոնք հասնելով գետին՝ կազմում են առանձին ինքնուրույն բուն, միաժամանակ գրավելով նորանոր տարածքներ: Այնուհետև ձևավորվում է խիտ սաղարթը:

Բենգալյան այս յուրօրինակ ֆիկուսը անընդհատ արձակում է օղային նորանոր արմատներ: Սակայն ոչ բոլոր արմատներն են հասնում գետնին: Նրանց մեծ մասը չորանում է օդում: Ծառը շարունակում է «քայլել»՝ ավելի ու ավելի առաջ շարժվելով և նվաճելով նոր տարածքներ:

Բենգալյան ֆիկուսը պատկանում է երկարակյաց ծառերի թվին, քանի որ մեկ ծառն ընդունակ է աճել և ընդարձակվել մի քանի հարյուրամյակ, իսկ երբեմն էլ՝ մի քանի հազարամյակ: Այսպես, օրինակ, Հնդկաստանի Կալկաթա քաղաքի բուսաբանական այգում աճող բենգալյան իսկայի մասին հիշատակվել է դեռևս XIX դարում՝ մի ճանապարհորդի գրառումներում: Ենթադրվում է, որ ֆիկուսի այս ծառն ավելի քան 250 տարեկան է: Այս ընթացքում ծառը հասցրել է արձակել 3000 օղային արմատ-բուն: Ճիշտ է, ծառի հիմնական մայր բունը արդեն չորացել է: Ծառն ունի 25 մ բարձրություն՝ 420 մ ընդհանուր տրամագծով: Նույն Հնդկաստանում, Բանգալոր քաղաքից 28 կմ հեռավորության վրա, աճում է ևս մեկ այլ նմանատիպ ֆիկուսի իրաշք-ծառ, որը 400 տարեկան է և զբաղեցնում է 12000 քմ: Սակայն այս ծառատեսակից ամենամեծն աճում է Շրի-Լանկայում: Այս ծառն ունի 350 հիմնական և 3000-ից ավելի լրացուցիչ բուն: Նմանատիպ ծառատեսակներ աճում են նաև Հարավ-արևելյան Ասիայի արևադարձային անտառներում: Նրանց համար շատ կարևոր են ջերմությունը ու խոնավությունը:

Բենգալյան ֆիկուսի տերևները մուգ-կանաչ են՝ կլոր, կարմիր գույնի պտուղներով, որոնցով շատ են սիրում սնվել թռչունները: Թռչուններն իրենց են տարածում ծառի սերմերը՝ թռչելով մի ծառից մյուսը: Սրա շնորհիվ ծառն ունի մեկ այլ անվանում՝ «թռչող»:



Գիտություն

Գլխավոր խմբագիր՝ Ա. ՏԵՐ-ԳԱԲՐԵԼՅԱՆ

Երևան-19, Մարշալ Բաղրամյան 24բ, հեռ. 56-80-14:
Հասիչ՝ 69268, գրանցման վկայական՝ 448:
Սպորազրկված է փապարության՝ 22.02.2010 թ.:

"ТИТУЮН" ("Наука") газета НАН РА